


Գ. Օ. Օհանյան



ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՐ ԳԵՏԵՐԻ ՈՒ ԼՃԵՐԸ

Հայութուում ամսագիրը
1961

Կ. Օ. ՕՀԱՆՑԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ
ԳԵՏԵՐՆ ՈՒ ԼՃԵՐԸ

ՀԱՅՊԵՏՈՒՄՄԱՆԿՐԱՍ
ԵՐԻՎԱՆ 1961



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ել

I.	Ընդհանուր տեղեկություններ	3
II.	Հայկական ՍՍՌ-ի գետերը և նրանց տեզաբաշխումը	10
1)	Արաքսը և նրա վտակները	11
2)	Մեծանալու ավազանի գետերը	37
3)	Քուռ գետի վտակները	40
III.	Ժամանակավոր հոսք ունեցող ջրերը և նրանց ճեղեղումները	44
IV.	Աղբյուրները	48
V.	Հայկական ՍՍՌ-ի լճերը	56
1)	Մեծանալու լճեր	56
2)	Հայկական ՍՍՌ-ի փոքր լճերը	65

ОГАНЯН К. О.
РЕКИ И ОЗЕРА АРМЯНСКОЙ ССР
(на армянском языке)

Армучпедгиз

Ереван, 1961

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-Ի ՏԵՐԻՏՈՐԻԱՆ

Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպոբլիկան գտնվում է ընդարձակ Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան մասում:

Նա հիմնականում ընդգրկում է Հայկական լեռնաշխարհի Քուռ և Արաքս գետերի միջև ընկած տարածությունը:

Ֆիզիկո-աշխարհագրական առումով Հայկական լեռնաշխարհը, որն այլ կերպ կոչվում է ուղղակի Հայաստան (Արմենիա), ընդգրկում է ոչ միայն ժամանակակից Հայկական ՍՍՌ-ի տերիտորիան, այլև նրանից շատ ավելի մեծ երկիր, որ ընկած է Անատոլիական և Իրանական սարահարթերի միջև։ Օտարերկրյա որոշ հեղինակների բաշտության համաձայն Հայաստանի «Արմենիա» կոչումը արամական ծագում ունի և հավանաբար նշանակում է «Բարձր Երկիր», որը տրվում է այն բոլոր սարահարթերի խմբին, որոնց կենտրոնում տիրապետող վեհությամբ բարձրանում է Արարատ լեռը։

Սակայն Հայաստանը, որ նշանակում է հայերի բնակության երկիր, որպես այդպիսին, տարաբախտ ղեպերի հետևանքով դարերի ընթացքում փոխել է իր վարչական սահմանները։ 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին հայերով էր բնակված Արաքսի գորեթե ամբողջ հովիտը, Քուռի ավազանի մի նշանակալից մասը՝ աջ ու ձախ ափերով, Եփրատի ամբողջ վերին ավազանը, Վանա լճի շրջանը և Ուրմիա լճի ավազանում Իրանական սարահարթի որոշ հատվածներ։ Այդ ժամանակներում Հայաստանի տերիտորիայի կենտրոնը մոտավորապես համրնկնում էր Վանա լճից հյուսիս արևելյան Եփրատի հովտի հետ Առաջին համաշխարհային պա-

տերազմից հետո հայության հաստատուն կենտրոն է դառնում Հայկական ՍՍՌ-ի տերիտորիան՝ Միջին Արաքսի ձախափնյա հովիտը, գետի ուր, որպես մայր երկիր, աշխարհի բոլոր մասերից պարբերաբար վերադառնում են բազմահազար տարագիր հայեր:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-Ի ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԵՏԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ

Հայկական ՍՍՌ-ի տերիտորիան աշքի է ընկնում մակերևույթի բազմապիսի ձևերով: Նրա վրա ամենուրեք հանդիպում են երկնաևալաց բարձր լեռնակատարներ, անդնդախոր գեղատեսիլ հովիտներ, ինչպես և ընդարձակ հարթ լավային բարձրավանդակներ:

Լեռներից ամենաբարձրը Արագածն է (4096 մետր). Արագածից ավելի բարձր Հայկական լեռնաշխարհում հայտնի է Արարատը (կամ Մասիսը—5156 մետր), որը, սակայն, այժմ գտնվում է Թուրքիայի տերիտորիայում:

Ռելեֆի խորդուբորդություններով ավելի շատ աշքի է ընկնում Հայկ. ՍՍՌ-ի հյուսիս-արևելքը: Այստեղ են գտնվում Սոմիսեթի, Բագումի և Փամբակի լեռները: Նրանց միջև ընկած են նեղ և խորը կիրճեր, որոնցով հոսում են Քուոփ ավազանին պատկանող գետերից Փամբակը, Զորագետը և նրանցից կազմված Դիրեղը:

Հայկական ՍՍՌ-ի հարավում գտնվում են Զանգեզուրի լեռները: Նրանք մասնաւուած են Հսկայական խորության համար անդունդներով, որոնց միջով հոսում են Արաքսի վտակներից Որոտանը, Ոխչին և ուրիշները: Սարահարթային ընդարձակ տարածություններից են Շիրակը, Լոռու տափաստանային հարթությունը:

Ընդհանուր առմամբ Հայկական ՍՍՌ-ն ունի շատ բարդ ռելեֆ: Այստեղ հաճախ կարելի է հանդիպել անկանոն ձևի վիթխարի լեռնազանգվածների, ոլորապտույտ խորխորատների, և այդ ամենը այն աստիճան անկանոն ձևով, որ շատ անգամ դժվար է լինում սահման անցկացնել առանձին լեռնաշղթաների ու նրանցից անջատվող լեռնաբազուկների միջև:

Ռելեֆի այսօրինակ բնույթի հետևանքով Հայկական ՌԵՌ-ի գետերը կազմում են բավականին խիստ ցանց և հանդես են գալիս մեծ մասամբ փոքր վտակների ձևով: Նրանք հոսում են սրբնթաց,

Հաճախ գահավիժում են մեծ բարձրությունից և շատ տեղերում առաջացնում են սահանքներ ու հիասքանչ ջրվեժներ։

Զառիվայր լանջերի և ընդհանուր առմամբ ոելեֆի զգալի թիւ քության պատճառով գետերի մի նշանակալից մասը հոսում է խելացիլ արագությամբ։ Նրանք աղմկում են, մոնշում, զարնվում են պատեպատ, ավերելով իրենց ափերը, պոկում հսկայական ժայռային բեկորներ և զարդ ու փշուր անելով դրանք՝ վերածում մեծ ու փոքր դլաքարերի։

ԳԵՏԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայկական ՍՍՌ-ի գետերի տարածումն ու առանձնահատկությունները որոշվում են ոչ միայն մակերևույթի կազմությամբ (ոելեֆի բնույթով), այլև կլիմայական պայմաններով։

Հայկական ՍՍՌ-ի կլիման ընդհանուր առմամբ ցամաքային է։ Այդ տեսակետից առավելապես հայտնի է Արարատյան հարթությունը, որտեղ տարեկան տեղումների քանակը կազմում է ընդամենը 250—300 միլիմետր։

Համեմատաբար խոնավ է Հայկական ՍՍՌ-ի հյուսիս՝ Լոռի-Փամբակի շրջանը։ Այստեղ հոսքային ջրերը ավելի շատ են, տարվա ամենացորդ և ամենատաք ամիսների ջերմաստիճանների միջև եղած տարբերությունը ավելի փոքր է, տեղումների քանակը ավելի շատ։

Հիմնականում ոելեֆով պայմանավորված, Հայկական ՍՍՌ-ի տերիտորիայում նկատում ենք ամենափոքր տարածությունների վրա կլիմայական պայմանների ամենամեծ բազմազանություն։ Այսպես օրինակ, Արարատյան գոգավորության ամենացածրադիր գոտում կիզիչ կիսանապատային տարածությունները ընդամենը մի քանի կիլոմետրի վրա աստիճանաբար փոխվում են բարձրւեռնային ալպյան մարգագետինների, որոնց սահմանակցում են հավերժական ձյունածածկ տարածությունները, ուր ոչ միայն տեղումներն են շատ (մինչև 900 միլիմետր), այլև ցածր բարեխառնության պայմաններում գոլորշացումները քիչ են լինում։

Հասկանալի է, որ ոելեֆի և կլիմայական պայմանների բազմազանությունը իր ազդեցությունն է թողնում նաև գետային ցանցի բնույթի վրա։ Ընդհանուր առմամբ Հայկական ՍՍՌ-ի գետերը լեռնային են, որովհետեւ նրանք մեծ մասամբ իրենց հղանքի վե-

րին և միջին մասերում անցնում են լեռնային շրջաններով, ունեն մեծ թեքություններ և հոսում են խորը ձորերով ու կիրճերով։ Գետերի սնումը կատարվում է հալվող ձյան, տեղումների և գետնաշրերի միջոցով։ Լեռնային այդ գետերը հասնելով սարահարթերի եզրին քայլայում են պատվար կազմող շղթաները, քարաբլուրները և ապա հաճախ հոսում այնպիսի նեղ կիրճերով, որոնց լայնությունը հազիվ մի քանի մետրի է հասնում, իսկ խորությունը՝ երբեմն ալելի քան 500 մետր։

Առանձին դեպքերում նրանք առաջացնում են գահավեժ չանչերով եզրավորված հսկայական կանյուններ (կիրճեր, ինչպես օրինակ Որոտանը), որոնց միջով կատաղի արագությամբ շած վազող ջրերը ավերում են հանդիպակաց բնական արգելքները և պոկելով ափամերձ ժայռերը, տանում են հեռու և կուտակում նախալեռնային հարթություններում։

Գետերի ավերիչ գործունեությանը մեծ շափով նպաստում են հաճախակի տեղի ունեցող հեղեղները, որոնք գլխավորապես գոյանում են լեռնալանջերում երկար ժամանակ կուտակված ծյան հալքից, հանկարծակի տեղացող կարկուտներից կամ անձրևներից։ Լեռնային այդ հեղեղները արագ կերպով բարձրացնում են գետերի մակարդակը։ Վարարուն այդ ջրերը, շատ անգամ տապալելով և երբեմն էլ արմատահան անելով հանդիպակաց ծառերը, անսովոր արագությամբ խոյանում են դեպի մայր գետերը։ Ընդհանուր առմամբ Հայկական ՍՍՌ-ի գետերի անկումը մեծ է, մեկ կիլոմետրի վրա այն հասնում է մի քանի տասնյակ մետրի։

Սակայն միջին հոսանքներում գետերի անկումը նկատելիորեն փորրանում է։ Նրանք հոսում են համեմատաբար հանգիստ և ավելի քիչ են քայլայում իրենց հունը։ Հովիտների աստիճանաբար լայնացման զուգընթաց դանդաղում է նաև գետերի հոսքը, որոնք տանում են արդեն համեմատաբար ավելի մանր նյութեր, տարբեր մեծության գլաքարերի, ավազների ձևով, որոնց մի մասը նստում է գետերի հատակին։ Ավելի խոշոր քարային բեկորները (վալունները) նրանք թողնում են նախալեռներում։ Սարահարթային մակերևույթով հոսող գետերի մի մասը (Արգիծի, Գավառագետ) առաջացնում է անգամ մեանդրներ։

Ստորին հոսանքում գետերը սովորաբար դուրս են գալիս հարթավայր։ Ակատեղ նրանց հոսքի արագությունը խիստ նվազել է։

Մանր քարային թեկորները, որոնք այս մասում՝ ներկայացված են զլաքարերի, ավագների ձեռվ, նստում են հատակին և դոյցնում ծանծաղուտներ ու ավագակույտեր: Գետերն այստեղից տանում են միայն մանր ավագ և տիղմ:

Հայկական ՍՍՌ-ի գետերի մակարդակը մեծ չափով սկսում է բարձրանալ ապրիլի վերջերից և շարունակում ամբողջ մայիս ամիսը: Ջրի մակարդակը մասնակիորեն բարձրանում է նաև աշնանը՝ սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին, իսկ Արաքսինը՝ նույնիսկ նոյեմբերին:

Գետերի գարնանային վարարումները, հալոցքային և անձրևային ջրերը լեռնային բարձր հարթություններում տեղ-տեղ առաջացնում են ճահճացումներ: Ջրերի մի մասը հոսում է գեպի գետերը, իսկ մի զգալի մասն էլ ներծծվում է երկրի խորքը և հետո կրկին մակերես դուրս գալիս ջրառատ աղբյուրների ձևով: Մեր մի շարք գետերի սնումը նշանակալից շափով կատարվում է աղբյուրների ջրերով, այդ պատճառով նրանց ոեժիմը անհամեմատ ավելի կայուն է: Այդպիսի ոեժիմ ունեցող գետերից են Ազատը, Աղստերը, Արաքսը իր վերին հոսանքում և այլն: Համեմատաբար կայուն հոսքով հայտնի է նաև Հրազդանը, որն սկիզբ է առնում Սևանա լճից: Սևանա լիճը կարգավորում է նրա ոեժիմը: Գարնանային ձնհալքի ժամանակ Հրազդանի ջրի բնական քանակը մեծ շափով ավելանում է շնորհիվ նրա մեջ թափվող աջափնյա վտակ Մարմարիկի, որի վարարումները արտակարգ շափերի են հասնում ապրիլ-մայիս ամիսներին:

Հայկական ՍՍՌ-ի գետերի մակարդակը խիստ կերպով իշնում է ամռան ամիսներին: Այդ բացատրվում է ոչ միայն ամռան կլիմայական շոր պայմաններով (բարձր ջերմությունը, սակավ տեղումները), այլև նրանով, որ այդ շրջանում գետերի ջրերի մեծ մասը օգտագործվում է ոռոգումների համար:

Չմոռան ամիսներին խիստ սառնամանիքային կլիմայի հետեւանքով գետերի մի մասը սառցապատվում է, սակայն լրիվ սառցակալում տեղի չի ունենում: Դրան արգելք են հանդիսանում մեր գետերի արագընթաց հոսքը և աղբյուրային սնումը:

ԳԵՏԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական ՍՍՌ գետերն արագ հոսքի և սակավաջրության պատճառով պիտանի չեն հաղորդակցության (նավագնացության) և փոխադրական նպատակների համար (եթե միայն նկատի չունենանք մասնակի բնույթ կրող լաստարկումը Արաքսի վրա): Սակայն նրանք մասնատել են դժվարամատչելի մեր լեռնային երկիրը, առաջացրել են անդնդախոր կիրճեր, ձորեր, որոնց ուղղությամբ հնարավորություն է ընձեռնվել անցկացնել երկաթուղային և խճուղային ճանապարհներ: Այս տեսակետից պատահական չե, որ մեր ամենից ավելի կարևոր երկաթուղային (Երևան—Թբիլիսի, Երեվան—Բաքու) և խճուղային ճանապարհները (Երևան—Դիլիջան, Կիրովական, Թբիլիսի) հիմնականում անցնում են գետահովիտներով:

Հայկական ՍՍՌ-ի գետերը տնտեսական բացառիկ կարևորություն ունեն որպես ոռոգման և էլեկտրաէներգիայի արտադրության աղբյուր:

Հայաստանի ամենաշոր վայրերից մեկը Մերձարաքսյան հարթությունն է, որտեղ ոռոգումներից զուրկ բոլոր վայրերը իրենցից ներկայացնում են կիսանապատճեր և չոր տափաստաններ: Այդ պատճառով այստեղ դեռ հնագույն դարերից սկսած մարդիկ պայքար են մղել ջրի համար. նրանք կառուցել են արհեստական բազմաթիվ ջրանցքներ, առուներ, լճակներ, որտեղ հավաքված հալոցքային, անձրևային և աղբյուրների ջրերը օգտագործել են պապակաշտերը ոռոգելու և այնտեղ այցելործությունը զարգացնելու նպատակով: Հնագույն այդ ջրանցքներից մինչև մեր օրերը պահպանվել են շատ մնացորդներ, որոնցից մի քանիսը զարմացնում են իրենց կատարելությամբ:

Երբեմն հարց է առաջանում, թե այդ ժամանակաշրջանում որտեղից կարող էր ոռոգման նպատակների համար այդքան ջուր գտնվել: Այդ առթիվ մեր գիտնականներից մի քանիսը (Հայկ, ՍՍՌ Գիտ. ակադ. թղթակից անդամ Լ. Վարդանյանցը և ուրիշները) այն միտքն են արտահայտում, որ հավանաբար այդքան շատ ջրանցքների կառուցման նախադրյալ են ծառայել մի ժամանակվա Գեղամա լեռներից ստորերկրյա անցքերով դեպի Արարատյան գոգավորությունը մուտք գործող Սևանա լճի մեծաքանակ ջրերը: Սակայն

Հետագայում, ըստ երևութին, երկրակեղեկի ցնցումները ավերել են ջրերի անցման բնական այդ ուղիները և այդպիսով փակել Սևանա լճի ջրերի մուտքը գեպի Արարատյան դաշտը և դրանով իսկ պայմաններ ստեղծել Սևանա լճի մակարդակի աստիճանաբար բարձրացմանը մինչև այժմյան մակարդակը:

Այդ ամենը ապացուցվում է ներկայումս Սևանա լճի մակարդակի իջեցման հետևանքով լճի մերկացված տարածություններում հնագույն շատ հուշարձանների, բնակավայրերի, ավերված ամրոցների, դանբարանների հայտնաբերմամբ, որոնք մեր հնէաբանների ուսումնասիրությունների համաձայն, վերաբերում են մեր թվականովթյունից առաջ 9-րդ դարին:

Մեր օրերում հիմնովին վերանորոգվել են հին առուները և կառուցվել են բոլորովին նորերը՝ կենինի, Հոկտեմբերյանի, Այդըր լճի, Շիրակի, Ստորին Հրազդանի և բազմաթիվ այլ ջրանցքներու Ոռոգման համար ջրերի օգտագործման մասշտաբն այնքան մեծ է, որ լեռնային գետերից մի քանիսը (Ազատ, Վեդի) ամռան ամիսներին դեռ Արաքսը չհասած ամբողջովին ցամաքում են:

Հայտնի է, որ Հայաստանը ընդհանրապես աղքատ է վառելիքի պաշարներով: Այդ պատճառով որպես էլեկտրաէներգիայի արտադրության միջոց խստ բարձրանում է Հայկական ՍՍՌ գետերի տնտեսական նշանակությունը: Սկիզբ առնելով բարձր լեռներից, նրանք իրենց արագ անկումով ստեղծում են հսկայական միխանիկական ուժ, որը և մենք օգտագործում ենք հիդրոէլեկտրակայաններ կառուցելով: Այս տեսակի հայտից հայտնի են Հրազդանը, Զորագետը, Ախուրյանը: Էլեկտրաէներգիայի խոշոր պաշարներ ունի Հատկապես Որոտանը, որի վրա նախատեսված է կասկադային սիստեմով կառուցել մի քանի էլեկտրակայաններ: Այդ թվում նշանակալի է Տաթևի հիդրոէլեկտրակայանը, որի շինարարությունը արդեն սկսված է:

Հաշվի առնելով գետերի ուժեղ հոսքից էլեկտրաէներգիայի արտադրության հնարավորությունները, մեզ մոտ միջին և խոշոր կարողության հիդրոէլեկտրակայաններ կառուցելու համար դեռ մինչ վերջերս առանձնացնում էին ներքոհիշյալ հինգ գետերը, այդ գետերի էլեկտրաէներգիայի հնարավոր հարաբերական արտադրության հետևյալ տոկոսներով.

1) Հրազդան (Սևանա լճի օգտագործումով)	45,5	տոկոսը
2) Որոտան (Հաշված Աղբբեջանական ՍՍՌ-ի տերիտորիայի վրա նախատեսված հիդրոկայանները)	21,8	տոկոսը
3) Դեբեդ	21,8	"
4) Արփա	9,0	"
5) Ոխցի Այստեղ հաշվի չի առնված Արաքսը, նկատի ունենալով, որ նա սահմանային գետ է ¹⁾ :	2,0	"

II. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-Ի ԳԵՏԵՐԸ ԵՎ ՆԲԱՆՑ ՏԵՂԱԲՍՇԽՈՒՄԸ

Հայկական ՍՍՌ-ում հաշվվում է մոտ 215 գետ և վտակ: Նրանք բաժանվում են երեք հիմնական ավազանների միջև՝ Արաքսի, Քուրի և Սևանա լճի: Սևանա լճի գետերի ջուրը ևս Հրազդան գետով հոսում է գետի Արաքս: Այսպիսով Արաքսի ավազանին բաժին է ընկնում Հայկական ՍՍՌ-ի տերիտորիայի 76,8 տոկոսը (կամ 22.450 քառ. կմ), իսկ Քուրի ավազանին՝ 23,4 տոկոսը (կամ 6968 քառ. կմ): Այս երկու մայր գետերի ջրաբանը մոտավորապես անցնում է Կեշուտի, Փամբակի, Արեգունի և Սևանի լեռնադղթաներով:

Կլիմայական խիստ տարբերությունների, հատկապես անհավասար տեղումների հետևանքով, Հայկական ՍՍՌ-ի գետային ցանցը բավականին անհավասար է տեղաբաշխված: Մակերևութային ավելի պակաս հոսքով առանձնանում է Արաքսի ավազանը, հատկապես նրա Մերձարաքսյան հարթությունը, որն աշքի է ընկնում գետային ծայրահեղ թույլ ցանցով: Այստեղ բավականին ընդուրած վայրեր իրենցից ներկայացնում են բնականորեն անջրդիչոր տարածություններ (կիսանապատճեր):

Մակերևութային առավել հոսքով Հայկական ՍՍՌ-ի սահմաններում աշքի է ընկնում Քուրի ավազանը: Այդ բացատրվում է ոչ միայն երկու խոշոր գետերի ավազանների կլիմայի էական

1) Վ. Պ. Մարտիհով. — «Սովետական Հայաստանի էներգետիկայի դարպացման ուղիներ», Հայպետհրատ, Երևան, 1957:

տարբերություններով, այլիս, որ շատ կարևոր է, ապառների ներ-
ծծիչ հատկություններով:

Արաքսի ավագանն ընդհանրապես ունի ցամաքային կլիմա:
Մինուրատային տեղումներն այստեղ սակավ են, ամառային բա-
րեխառնությունը բարձր է, արեգակնային ուաղիքացիան շատ
առատ: Այդ ամենի հետևանքով խոնավությունը խիստ պակաս է:
Բայց այդ, Արաքսի ավագանում հսկայական տարածություններ
ծածկված են երիտասարդ, խիստ ծակուեկեն լավային ապառնե-
րով, որոնք հեշտությամբ ներծծում են ձնհալի և անձրևային
ջրերը, կենտրոնացնում նրանց ստորերկրյա ջրամբարների մեջ
և այդպիսով բացասաբար անդրադառնում այդ վայրերի մակերե-
սային հոսքի վրա:

Արարատյան գոգավորության խոնավության պակասը որոշ
շափով լրացնում են արհեստական կառուցումների միջոցով հեռ-
վից բերվող ջրերի և արտեզյան աղբյուրների շնորհիվ:

Քուրի ավագանը համեմատաբար խոնավ է և կազմված է գլո-
խավորապես թույլ ներծծման ընդհնակ ապառների շերտերից:
Այդ հանգամանքը ապահովում է, որպեսզի առանց էական կորստի
ձնհալքի և անձրևային ջրերը տեղափոխվեն ավելի մեծ տարա-
ծությունների վրա. այս պատճառով Քուրի ավագանը աշքի է ընկ-
նում ավելի առատ մակերեսային հոսքով:

Կատարված հաշվարկումների համաձայն Հայկական ՍՍՌ-ում
թափվող տեղումների 34 տոկոսը աղբյուրների, ձնհալքի և անձրե-
վային ջրերի ձեռք հոսում է Քուր և Արաքս գետերը. մնացած 66
տոկոսը գոլորշիանում է:

1. ԱՐԱՔՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՏԱԿՆԵՐԸ

Արաքսը Հայկական լեռնաշխարհի ամենախոշոր գետերից
մեկն է: Արաքս անունը անբաժանելիորեն կապված է հայ ժողո-
վրդի պատմության հետ: Նրա ավագանը բազմաթիվ դարերի ըն-
թացքում եղել է հայ ժողովրդի կազմավորման օրրանը:

Արաքսի ավագանում ամենուրեք կարելի է հանդիպել հար-
տարապետական հոյակապ կառուցումների, ավերված քաղաքների,
պալատների, բերդերի, ջրանցքների բազմաթիվ հետքերի, որոնք

Հանդիսանում են հայ ժողովրդի նյութական կուլտուրայի անցյալի վկաները:

Արաքսի բուն հովտում հռչակված են եղել հայոց մայրաքաղաքներ Դվինը, Արտաշատը, Անին և ուրիշ քաղաքները:

Արաքսը բուն հայկական գետ է: Հայ ժողովուրդը նրան կոչել է «Մայր Արաքս», բազմաթիվ սրտառուշ երգեր հորինել նրա մասին և ողբացել նրա դառը վիճակի համար:

Արաքսն ունի 933 կմ երկարություն, որից մոտ 200 կմ կազմում է Հայկական ՍՍՌ-ի սահմանը:

Արաքսն սկիզբ է առնում Բյուրակն (Բինգյոլ-դաղ) կամ Հաղարալճյան լեռներից: Արաքսի ակունքները ներկայացնում են ժայռերի բացվածքներից գուրս ցայտող բազմաթիվ սառնորակ աղբյուրներ: Պաղ, գրեթե սառցային ալդ ջրերն ունեն ոչ ավելի 3—3,5° ջերմություն: Նրանցից ձևավորվում են փոքրիկ առվակներ, որոնք ճառագայթաձև բաժանվում են գերազանցապես Արաքսի և Եփրատի սխտեմին պատկանող Արածանի (Մուրադ) և Սև-ջուր (Կարասու) գետերի միջև:

Սառնորակ այդ աղբյուրները և բազմաթիվ փոքրիկ լճակները, որոնցից անմիջականորեն ձևավորվում է Արաքսը, սնվում են Բյուրակն լեռներում ձմռանը՝ առատորեն թափվող ձյան և ամռանը՝ անձրևային ջրերից: Բյուրակն լեռներն ունեն 3700 մետր բարձրություն: Իսկ Արաքսի ակունքներն սկսում են 2200—2700 մետր բարձրություն ունեցող սարահարթից:

Բյուրակնյա սարահարթի աշքի ընկնող լեռնագագաթներից է Սրմանց (Բինգյոլ) լեռը, որի հյուսիս-արևմտյան փեղերից (այս տեղ հավաքվում են հաղարավոր աղբյուր-լճակների մեծ մասը) սկիզբ է առնում Արաքսը: Բուն Արաքսի ակունքները ներկայացնում են բազմաթիվ աղբյուրներից կազմված շորս առվակներ: Նրանցից ամենից երկարը, որն սկզբնավորվում է ամենաբարձր լեռնագագաթից և համարվում է Արաքսի իսկական սկիզբը՝ կոչվում է Բինգյոլ-Սու (Բյուրակնյան ջուր): Առվակների միացումից հետո Արաքսը սկզբում որպես մի փոքրիկ գետակ հոսում է դեպի արևմուտք, այնուհետև իր մեջ ընդունելով Բյուրակնի մյուս լանջերից իջնող վտակները թեքվում է դեպի հյուսիս-արևելք և այդպես շարունակում իր ընթացքը մինչև Կարայագի դաշտը:


Բյուրակն լեռներից մինչև Կարայազի դաշտն Արաքսը անցանում է աղմկալից, բայց որպես փոքր գետ: Կարայազի դաշտում նա իր մեջ է ընդունում Կարա-Սու գետը և շատ շանցած պատռում Հայկական Պար լեռնաշղթան և արագընթաց հոսանքով դուրս գալիս Բասենի դաշտը: Այստեղ նրան է միանում Մուրց (Հասան-Կալա Սու) գետը, որից հետո անցնում է Կաղզվանի անձուկ ձորերով, նոր վտակներով ավելացնում իր ջրերի քանակը և ապա որպես ջրառատ գետ մուտք գործում Արարատյան դաշտը:

Արարատյան գոգավորության սահմաններին հասնելով, Արաքսը դուրս է գալիս իր նեղ կիրճից և հոսում ընդարձակ հովտով: Հրազդանի գետախառնուրդի մոտից նա թեքվում է գեպի հարավարելք և չնայած բազմաթիվ զիգզագներին, մինչև Զովֆա պահպանում է միենալու ուղղությունը: Նախիջեանի մոտ Արաքսը հոսում է զառիվճեր և տեղ-տեղ ոլորապտույտ ափերի միջով: Այստեղ նրա ձախակողմյան ափը սկսում է նկատելիորեն բարձրանալ՝ արեւելքից աստիճանաբար դեպի նրա հունը իջնող լեռնաբազուկների շնորհիվ: Արաքսի ափերը առանձին տեղերում ներկայացնում են մինչև 2 մետր բարձրությամբ քարափներ: Հասած Զովֆային, գետը մտնում է խոր և նեղ ժայռային կիրճ: Այստեղ հովտի երկու կողմերից լեռներն այնքան են մոտենում ափերին, որ մի շարք տեղերում կարծես թե նրանք ուղղակի կախված են գետի վրա: Այս մասում գետը հոսում է մերժ շատ արագ և մերժ հանդարտ: Զովֆայի մոտ Արաքսը կարճ տարածության վրա կրկին դուրս է գալիս հարթավայր և միաժամանակ փոխում իր ուղղությունը դեպի արեւելք: Այստեղ գետը ճյուղավորվում է, առաջացնում կղզիներ և մի շարք տեղերում՝ ծանծաղուտներ:

Օրդուրադից մի փոքր արեւելք, երկու կողմից Արաքսին են մտենում առանձին բլրաթմբեր: Գետի հունը աստիճանաբար նեղանում է, առաջանում են սահմանքներ: Մեղրիի մոտ Արաքսին են մոտենում Զանգեզուրի և Ղարադաղի լեռները: Սեղմված այդ լեռներով, Արաքսը հոսում է Մեղրիի նշանավոր՝ հնում «Քարավազ» կոչվող երկար և խոր կիրճով: Այստեղ կարելի է ասել, որ Արաքսը խելածեղ արագությամբ շարունակում է վազել մինչև Բարգուշատի և Հագարացի գետախառնուրդը: Մեղրիի կիրճում Արաքսի մոլեգ-

նող ջրերից առաջացած հոնդալից աղմուկը ուժգնորեն արձագանքում է շրջապատի լեռներում և մերձակա ձորերում:

Արաքսի ստորին հոսանքն անցնում է Քուռ-Արաքսյան դաշտավայրով: Հենց այստեղ էլ նա խառնվում է Քուռին, միաժամանակ իր ջրերի մի փոքր մասը առանձին բազուկով ուղղում դեպի Կասպից ծովը:



Նկար 1. Արաքսի կիրճը Մեղրու մոտ

Արաքսը ցայտուն կերպով արտահայտված լեռնային տիպի գետ է: Նա հոսում է բավականին արագ և քշում տանում է մեծ քանակությամբ զանազան նյութեր՝ ամենից ավելի տիղմ: Այս տեսակեատից Արաքսը գերազանցում է անգամ նեղոսին:

Կատարված հաշվարկումների համաձայն Արաքսի մեկ լիտր ջուրը պարունակում է 3,6 գրամ տիղմ, մինչդեռ նեղոսի մեկ լիտր ջրում տիղմի քանակը հաշվվում է միայն 1,49 գրամ: Գետի ցածր մակարդակի դեպքում Արաքսի պղտորությունը (տղմոտությունը) հաշվում է մեկ լիտր ջրում 1,51 գրամ, իսկ նեղոսինը՝ 0,47 գրամ:

Պարզված է, որ Արաքսը տարեկան ծովն է տանում ոչ պակաս, քան մեկ միլիոն վագոն տիղմ, որից միայն գարնան յուրաքանչյուր օրը 800 վագոն կամ 200 գնացք:

Այդ տիղմի մի մասը նման կուտակում է Քուռ-Արաքսյան դաշ-

առավայրում (Աղբքեջանական ՍՍՌ), իսկ մյուս մասը տանում ծով, դրանով իսկ նպաստելով Քուռ-Արաքսյան դաշտավայրի ընդարձակմանը՝ ի հաշիվ Կասպից ծովի:

Ընդհանուր առմամբ մեծ քանակությամբ տիղմ պարունակելու հետևանքով Արաքսը ամբողջ տարվա ընթացքում հայտնի է իր մշտական պղտորությամբ: Այնպիսի ջինչ, մաքուր ջուր, ինչպիսին ունեն Հայկական ՍՍՌ-ի մյուս գետերը, Արաքսը երբեք չի ունենում:

Չնայած Արաքսի մշտական պղտորությանը, այնուամենայնիվ նրա ջրերը աշքի են ընկնում հաճելի համով և հիանալի որակով: Հին ժամանակներից սկսած Արաքսը մեծ համբավ ուներ ստամոքսի մի շարք հիվանդությունների բուժման ընազավառում:

Արաքսի պղտոր ջրերը լայնորեն օգտագործվում են Մերձարաքսյան հարթության այգիներում և դաշտերում ոչ միայն ոռոգման, այլև պարարտացման համար: Նրա ջրի մեջ պարունակվող կարմրավուն տիղմը, որպես Հայկական լեռնաշխարհի բազմադարձ ապաների հողմնահարման պրոդուկտ, հանդիսանում է լավագույն ընական պարարտանյութը: Նրա մեջ կան բավականաչափ աղոտային բաղադրիչներ և կալիումային նյութեր:

ԱՐԱՔՍԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵՐՁԱՐԱՔՍԱՆ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արաքսը Հայկական ՍՍՌ-ի ամենամեծ գետն է: Նրա լայնությունը Մերձարաքսյան հարթությունում սովորաբար տատանվում է 30-ից մինչև 130 մետրի սահմաններում: Իսկ եթե նկատի ունենանք, որ նա իր հոսանքի զգալի մասում բաժանվում է մի շարք բազուկների, որոնց միջև ընկած ցամաքը վարարումների ժամանակ ամբողջովին ծածկվում է ջրով, ապա այդ վայրերում Արաքսի լայնությունը հասնում է 1-ից մինչև 1,5 կիլոմետրի:

Վարարումների ժամանակ Արաքսի ամենանեղ մասի լայնությունը (եթե միայն այն չի սեղմված զառիթափ ափերի մեջ) հասնում է մինչև 200 մետրի: Չնայած այսպիսի մեծ լայնության, Արաքսի խորությունը շատ մեծ չէ: Այն տատանվում է 3-ից մինչև 4,5 մետր: Ընդ որում գլխավոր հունում ամենափոքր խորությունը հասնում է 0,75 մետրի:

Գետի հատակն ընդհանուր առմամբ հարթ է և ամուր: Սակայն

չեն բացառվում հատակի առանձին մասերում քարերի, ինչպես նաև տղմային նյութերի կուտակումները, որոնք առաջացնում են ծանծաղուտներ։ Զնայած այս ամենին, նկատի ունենալով՝ Արաքսի ջրառատությունը, հոսանքի ոչ մեծ արագությունը և բավարար խորությունը, այն կարելի է որոշ տարածության վրա դարձնել նավարկելի, արհեստական ձևով վերացնելով մասնակի բնույթ կրող անհարթությունները։

Արաքսի արագությունը մեկ վայրկյանում հաշվվում է մոտ 1,5 մ, մինչեն կան նավարկելի շատ գետեր, որոնց արագությունը մեկ վայրկյանում հասնում է 2-ից մինչև 3 մետրի։ Հոենոսի արագությունը (ըրի բարձր մակարդակի ժամանակ) Բաղել քաղաքի մոտ հաշվվում է վայրկյանում 2,88 մետր։ Նույնը կարելի է ասել Գանուրի մասին նրա որոշ հատվածներում։ Հետևապես Արաքս գետի միջին արագությունը նավարկության համար կարելի է համարել միանգամայն բավարար։ Արաքսի ամենափոքր խորությունը ընդունված է հաշվել ոչ պակաս 0,75 մետր, որը նույնպես չի կարող խանգարել նավարկմանը, քանի որ նավարկելի ուրիշ գետերում (օրինակ Էլբայում) ամենափոքր խորությունը հաշվվում է մոտ 0,68 մետր։

Այսպիսով, համապատասխան կարգավորիչ աշխատանքներ տանելուց հետո կարծեք թե չկա պատճառ, որը անկարելի դարձնեց Արաքսով հնարավոր նավարկությունը։ Սակայն դա հարցի մի կողմն է։ Անհրաժեշտ է նկատի ունենալ նավարկության ներկա ոչ մեծ տնտեսական շահավետությունը, նավարկության սահմանափակ տարածությունը, ինչպես նաև այն, որ Արաքսը ներկայումս սահմանային գետ է։

Արաքսի ջրերը շատ ավելի մեծ կարևորություն են ներկայացնում լաստարկման համար։ Դեռ շատ տարիներ առաջ Արաքսի ջրերն օգտագործվել են անտառանյութ տեղափոխելու համար։ Մեր պատմահայր Մովսես Խորենացու վկայությամբ, Հայկական հնագույն մայրաքաղաք Արտաշատի կառուցման ժամանակ անհրաժեշտ քանակությամբ անտառանյութը բերվում էր Արաքս գետով։ Կա տեղեկություն և այն մասին, որ Երևանյան նահանգի ուռ-

1. Առաջնա Խորենացի, հայոց պատմություն, Հայպետիքատ, Երևան, 1910, էջ 117։

սական տիրապետության սկզբում, Արաքսով անտառի լաստառաքումը դարձել էր խիստ նշանակալից երեսով: Այդ պատճառով Արփայի գետախառնուրդի մոտ կազմակերպված էր ոչ մեծ մաքսատուն անտառանյութերի լաստառաքմանը հսկելու համար: Այս ամենը ցույց է տալիս Արարատյան դաշտի համար Արաքսի ոչ միայն ներկայիս ռոռոգիշ կարեռ նշանակությունը, այլև ապագա լաստառաքման, գուցե և նավարկության կարեռությունը:

Արաքսն իր սկզբնավորման մասում հոսում է խելածեղ արագությամբ: Դրանով իսկ նա վերին հոսանքում առաջացնում է հըսկայական մեխանիկական ուժ, որն ավերելով գետի ափերը, պոկում է հսկայական ժայռեր, գլորում քարեր և այդ ամենը մանրացնելով քշում, տանում է հոսանքով:

Միջին և ստորին հոսանքում մասնակի ընույթ կրող խոշոր գլաքարերի հետ միասին, Արաքսը բերում է մեծ քանակությամբ տիղմ, կավ, ավագ և այդ ամենը նստեցնելով իր հատակին, բարձրացնում է ջրի մակարդակը, դուրս գալիս իր ափերից և հաճախ «որոնում» նոր հուն:

Արաքս գետի այս հատկությունը, որ դրսեռվում է հատկապես գարնան վարարումների ժամանակ, պատճառ է դարձել, որ նա բազմիցս անգամ փոխի իր հունը:

Նոր հունի հաճախակի «որոնումներով», այլ կերպ ասած «թափառումներով» աշքի է ընկնում Արաքսն իր միջին և ստորին հոսանքներում: Այդ «թափառումներից», ինչպես նաև վարարումներից առաջացած վնասից զերծ մնալու համար, Արաքսի ստորին հոսանքը պաշտպանված է պատնեշների մի ամբողջ սիստեմով: Զնայած դրան, նա երբեմն գարձյալ դուրս է գալիս իր ափերից և կատարում մեծ ավերումներ:

Առանձնապես խոշոր էին 1896 թ. ավերումները, երբ Արաքսը փակելով իր ջրերի մի մասի ընթացքը դեպի Քուոր, սկսեց բոլորովին նոր հունով հոսել դեպի Կասպից ծովը: Բայց այնուամենայնիվ, նրա ջրերի մեծ մասը մինչև այժմ էլ դեռ հին հունով շարունակում է հոսել Քուոր գետը:

Հնահուների մի ամբողջ ցանց գոյություն ունի Արաքսը՝ հարթությունում: Դրանք ցույց են տալիս երբեմն նրանց համար Արաքս գետի հետքերը: Դրանցից ուշագրավ է համեմատած Արաքսը», որն անցնում է Հոկտեմբերյանի և էջմիածնի լորջակաների



Հարավով և իրենից ներկայացնում է՝ չորացած գետի ոչ շատ խոր, բայց բավականին լայն հուն, որի առաջացումը պետք է բացատրել նաև գեռ հնագույն դարերից այստեղ կառուցված արհեստական ջրանցքներով։ Ամենայն հավանականությամբ Արաքսի ժամանակակից հունը Արարատյան դաշտում մի ժամանակ եղել է ջրանցք։

Արարատյան դաշտում խոշոր հեղեղումներ և դրանց հետևանքով առաջացած ավերումներ դիտվել են Խորվիրաք վանքի մոտ։ Այստեղ թիվետ գետը հոսում է բավականին խոր և նեղ հունով, բայց վարարումների ժամանակ երեքմն նա հասնում է մոտ 2 կիլոմետր լայնության։

Արաքսի վարարումների հետևանքով առաջացած ավերումների հետքերն են մինչև մեր օրերը մնացած բազմաթիվ քանդված կամուրջներ։ Հայտնի է, որ դեռ հնագույն ժամանակներից Արաքսի վրա ստեղծված էին մի շարք կամուրջներ, որոնք իրենցից ներկայացնում էին կառուցողական արվեստի հրաշալիքներ։ Դրանցից էր Զուլֆայի կամուրջը, որով 1396 թվականին անցավ Լենկթեմուրը իր զորքի հետ միասին։ Հետագայում՝ 1605 թվին պարսից Շահ-Աբասի կարգադրությամբ այդ կամուրջը ավերվեց, որպեսզի արգելք հանդիսանա թուրքերի ներխուժմանը Պարսկաստան։ Պատմական տվյալներով նույնպիսի կամուրջներ Արարատյան դաշտում ցուց են տրվում Արփայի գետախառնուրդի, Խորվիրաք վանքի, Երվանդակերտ քաղաքի փլատակների մոտերքում (Կարակալա) և մի շարք այլ վայրերում։ Սակայն այժմ նրանց միայն ավերված հետքերն են մնացել։ Բայտ երկույթին դրանց մեծ մասը քանդել է Արաքսը, որի համար էլ հնում նրան անվանել են «Կամուրջներ Հանդուրժող Արաքս»։

Արաքս գետի հնագույն հունները մեծ մասամբ հաճացած են։ Տեղ-տեղ նրանց մեջ պատահում են փոքրիկ լճակներ, իսկ առանձին դեպքերում վազող հեղեղատային ջրեր։ Հնահունների մի մասը ներկայումս օգտագործվում է որպես ջրանցքներ։

Հայկական ՍՍՌ-ի սահմաններում Արաքսի սիստեմին են պատկանում մի ամբողջ շարք վտակներ։ Դրանք ընդհանրապես փոքր գետակներ են, բայց լինելով լեռնային վտակներ աշքի են ընկնում էներգիայի մեծ պաշարներով։ Նրանց մշտական հոսքը

ապահովված է հիմնականում աղբյուրների, մասամբ լճերի և քիչ շափով ճահճային ջրերով:

Արաքսի ձախափնյա (Հայկական ՍՍՌ-ի տերիտորիայով հոսող) կարեռագուցն վտակներից հնա Ախուրյանը, Սև ջուրը, Քառախոր, Հրազդանը, Ազատը, Վեդին, Արփան, Ոխչին, Որոտանը և մի քանի համեմատաբար ավելի փոքր գետակներ:

ԱԽՈՒՐՅԱՆԸ

Ախուրյանը սկիզբ է առնում Դուկասյանի սարահարթում գլուխը Արփի փոքրիկ լճից, որը գտնվում է ծովի մակերեսուցից 2044 մետր բարձրության վրա: Սկզբում մոտ 15 կիլոմետր երկարությամբ Ախուրյանն անցնում է մասամբ ճահճապատ ափերով ուղղի դեպի արևելք և ապա իր մեջ ընդունելով Կեշուտի հարավային լեռնալանջերից մի քանի վտակներ, թիքվում է դեպի հարավ՝ Շիրակի դաշտը: Այնուհետև շրջափելով Արագածի արևելյան փեշերը, Աղին երկաթուղարին կայարանի մոտ միանում է Գարսագետին, որից հետո սրբնիքաց հոսանքով կտրում է հրաբխային ժայթը բումներից գոյացած լավային դաշտը և ավելի խորացնելով իր հունը, տեղ-տեղ մոտ մինչև 400 մետր բարձրության հասնող քարքարոտ ափերով շարունակվում մինչև Արաքսի գետախառնուրդը:

Ախուրյանը վայրի բնույթ ունի հատկապի կապս գյուղից մի փոքր հարավ: Այստեղ նաև ուժգնորեն խորացնում է իր ժայռային կիրճը, քանդում առափնյա բարձունքները և քարերով ծածկված հովիտը դարձնում խիստ դժվարամատչելի մի տեղամաս:

Սակայն միանդամայն այլ է Ախուրյանի հովիտը վերին հոսանքում, Արփի լճի շրջակալիքում, որտեղ խոնավ մարգագետնացին, քիչ շափով նաև ճահճային տարածություն է: Այդ մասով դեռ հոսում է աննկատելի արագությամբ: Ըստ որում գետի հովիտը շրջապատող հարթությունը ամբողջապես ծածկված է հարուստ արոտավայրային և խոտհարքային բուսականությամբ:

Լենինականից հարավ Ախուրյանը հոսում է ցածրադիր, հարթ և կանաչապատ ափերով, Այստեղ վարարումների հետևանքով Ախուրյանը երբեմն դուրս է դալիս իր ափերից և տեղ-տեղ շից մինչև 3 կմ լայնությամբ ողողում իր ափամերձ հարթությունը:

Աղին երկաթուղարին կայարանի մոտից սկսած, Ղարսագետն իր մեջ բնդունելուց հետո, Ախուրյանը գառնում է կրկնակի ջրա-

ուատ և ավելի մեծ արագությամբ լայն և խոր հովտով հոսում է ընդհուպ մինչև Արաքսը:

Արաքս հասնելուց առաջ, Ախուրյանը Արագածի լեռնալանջեարից իր մեջ է ընդունում Մանթաշի և մի շարք այլ փոքր վտակներ, որոնց ջրերը ամառվա ընթացքում շատ անգամ դեռ Ախուրյանը շհասած սպառվում են Շիրակի դաշտերում:

Ախուրյանի ջրերը ոռոգման նպատակով օգտագործելու համար 1922 թվին հիմք գրվեց Շիրակի՝ Հայկական ՍՍՌ-ի առաջին խոշոր ջրանցքի շինարարությանը: Ջրանցքի կառուցումը ներկայացնում էր տեխնիկական մեծ հետաքրքրություն և նրա իրագործումը կապված էր ինժեներական խիստ բարդությունների հետ: Ջրանցքը շահագործման հանձնվեց 1925 թվականի հունիս ամսին: Նրա գործարկումը վերածվեց համաժողովրդական մեծ տոնի: Բացմանը ներկա էին Սովետական Միության, ինչպես նաև օտարերկրյա շատ հյուրեր, որոնց թվում նորվեգիայի ականավոր գիտնական և աշխարհահռչակ բևեռախուզդ Ֆրիտյոֆ Նանսենը: Արանցքը ներկայում ոռոգում է մոտ 12000 հեկտար հող:

Ախուրյան գետի երկարությունը 190 կիլոմետր է: Այդ տարածության մոտ $\frac{2}{3}$ մասն անցնում է Թուրքիայի հետ ունեցած սահմանագծով: Գետի ձախ ափին գտնվում է Լենինականը, իսկ աջ ափին՝ 13-րդ զարի խոշորագույն քաղաքներից մեկի՝ Անիի ավերակները: Իր ժամանակին Անին գետի ձախ ափի հետ կապված է եղել երկու հոյակապ կամուրջներով, որոնցից այժմ մնացել են միայն բեկորներ:

Անիի հարավում խոր ձորերի միջով օձապտույտ գալարումներով սրընթաց հոսում է Ախուրյանը: Անիից արևմուտք գտնվում է ոչ մեծ Շաղկաձորը, որի միջով հոսում է Ալաճա վտակը, իսկ արևելքում ավելի փոքր և սակավաջուր Գայլիձորը (կամ Գլիձորը):

ՍԵՎ ԶՈՒՐԾ

Արագածի ձնածածկութից առաջացած բազմաթիվ առվակներ և հեղեղատային ջրեր անհետանում են հրաբխային շերտերում և հետո ցածրագիր լեռնալանջերում լավայի տակից դուրս են գալիս երկրի մակերես որպես սառնորակ աղբյուրներ:

Արագածի հարավային լանջի ստորերկրյա այդ աղբյուրներից է

գոյացել Այդըր լիճը։ Այդըր լիճը նախկինում կոչվել է «Գալլոտ», քստ երեսութին նրա շրջապատում մի ժամանակ մեծ քանակությամբ թափառող գայլերի պատճառով։ Էճից սկիզբ է առնում Սևուր գետը, որի սնումը մեծ մասամբ կատարվում է նաև Արագածի անմիջապես ստորոտից բխող աղբյուրներից։ Գետը հոսում է շատ դանդաղ, մեծ մասամբ եղեգնուտներով ծածկված և ճահճացած ափերի միջով։ Առաջներում Սևուրը մինչև Արտաշատի շրջանի Շահումյան (Յուվա) գյուղը հոսում էր Արաքսին զուգահեռ։ Ներկայումս նա հոսում է ավելի կարճ տարածություն և դեռ շհասած Հրազդանը թափվում է Արաքս։ Սևուր գետի երկարությունը 40 կիլոմետր է։ Նա ունի հաստատուն ռեժիմ։ Նրա ջրերով ոռոգվում են Հոկտեմբերյանի և Էջմիածնի շրջանների հողերը։ Գետի ակունքները, Այդըր լճի ճահճացած ավազանի հետ միասին այժմ օգտագործվում են որպես պետական արգելավայր, կլիմաշավարժության նպատակով այստեղ բերված կուղբի (ջրշան) պահպանման և բազմացման համար։ Վերջին մի շարք տարիների կատարած դիտումները ցույց են տալիս, որ Սևուր գետի դանդաշումը, ճահճացին բուսականությամբ հարուստ և անուշահամ ջրե-



Նկար 2. Սևուրի ակունքներում—Այդըր լիճը։

Քը լավագույն նախապայմանն են կուղբի բնակեցման և զարգացման համար։ Ներկայումս Հայաստանում կուղբի կլիմայավարժե-

ցումը կարելի է համարել հաջողված: Բայ որում թանկարժեք մորթի ունեցող փոքրիկ այդ կենդանին սպասածից շատ ավելի արագ բազմանալով, Այդը լճի ավագանից սկսած, ամբողջ Սևուր գետի հովտով հասել է մինչև Արաքս: Կան տեղեկություններ, որ Արաքսի ճահճապատ ափերով կուղը հասել է մինչև Մինջևանը:

Սևուրը ստորին հոսանքում, Արաքսի գետախառնուրդից, մոտ 15 կիլոմետր հեռավորության վրա, իր մեջ է ընդունում Քասախ գետը, որից հետո հոսում է բավականին արագ, բայց հանգիստ, գառնալով Արաքսից հետո Հայկական ՍՍՌ-ի ամենաջրառատ գետերից մեկը:

ՔԱՍԱԽ ԳԵՏԸ

Քասախ գետի ակունքները երկու փոքրիկ առվակներ են, որոնցից մեկը սկիզբ է առնում Արագածի, իսկ մյուսը Փամբակի լեռնալանջերից: Նրանք մինչև Պոնդաղսաղ գյուղը և նրանից մի փոքր հարավ հոսում են հարթ, մարգագետնային, տեղ-տեղ ճահճային տարածության վրա: Պոնդաղսաղ գյուղի մոտ իրար խառնվելուց հետո կազմում են Քասախի գետ:

Վերջինս դեռ չհասած Ապարան գյուղը, սկսում է հոսել զառիթափ ժայռոտ ափերով, միաժամանակ իր ջրերի մի զգալի մասը կորցնում հրաբխային ծակոտկեն ապառների մեջ և միայն Ապարան գյուղի մոտ կրկին հարստանում է երկրի մակերեսով՝ դուրս եկող բազմաթիվ հորդառատ լաղբյուրներ և մի քանի ջրառատ գետակներ իր մեջ ընդունելուց հետո:

Առավել ջրառատ և սրբնթաց հոսանքով աշքի է ընկնում նա իր միջին հօսանքում, հատկապես Աշտարակ և Օշական գյուղերի շրջանում, որտեղ նրա հովիտը ներկայացնում է մինչև 200 մետր բարձրության հասնող խոր ձոր: Արարատյան գաշտի սահմաններում Քասախի ջրերն ամբողջովին օգտագործվում են շրջակա գյուղերի ցանքատարածություններում և այդիներում: Գետաբերանային մասում Քասախը բաժանվում է մի քանի բազուկների և թափվում Սևուր գետը: Ամառվա ամիսներին ոռոգման լայն ցանցի և ջրերի ուժեղ գոլորշիացումների հետևանքով Քասախի ստորին հոսանքը հաճախ իրենից ներկայացնում է միայն որպես չորացած պիտուղուն:

Քասախի մեջ են թափվում մի քանի շրառատ գետակներ։ Դրանցից նշանավոր է Հատկապես Ամբերդ գետակը, որը սկիզբ է առնում Արագածի ձևածածկ լանջերից և մի քանի հորդառատ աղբյուրներից։ Ամբերդ գետակի հունը ներկայացնում է խորը կիրճ։ Այնտեղից հոսող ջրերը, կապված Արագածի վրա թափվող տեղումների քանակի հետ, մերթ ուժեղ վարարում են, մերթ խիստ նվազում (համարյա ցամաքում)։ Այստեղ՝ գետակի ոեժիմի նկատելի փոփոխմանը մասամբ ազդում են նաև քամիները, երբ նրանց շնորհիվ Արագածի լեռնալանջերից սրբվող ձյունը կուտակվում է խոր ձորակներում և այնտեղ, ստվերի տակ հալվում դանդաղ և մշտապես։

ՀՐԱՋԴԱՆ ԳԵՏԸ

Հրազդանը Արարատյան դաշտի սահմաններում Արաքսի ամենախոշոր վտակներից մեկն է, որն ունի ավելի քան 140 կիլոմետր երկարություն։ Գետը իր Հրազդան անունը կրում է գեռևս պատմական հնագույն ժամանակներից։ Հետագայում մինչև մեր թվականության 2-րդ դարը (երբ նրա վրա կառուցվում է թժնի քաղաքը) կոչվում էր Բժնիջովր, իսկ թուրք-պարսկական տիրապետության շրջաններից սկսած Զանգի։ Մեր օրերում գետը վերանվանված է իր իսկական անունով և կոչվում է Հրազդան։

Հրազդանը սկիզբ է առնում Սևանա լճից և մինչև Զրառատ գյուղը հոսում է համարյա ուղիղ գեպի արևմուտք, այնուհետև հարավ և հարավ-արևմտյան ուղղությամբ շարունակում իր ընթացքը մինչև Երևան և ապա Արարատյան դաշտով հասնում Արաքս։

Զրառատ և Աթարբեկյան գյուղերի շրջանում Հրազդանը հարստանում է աղբյուրների և Մարմարիկ գետի ջրերով։ Սակայն նա գեռ շարունակում է հոսել դանդաղ և միայն Քաղսի գյուղից սկսած, երբ մեծանում է անկումը, փրփրալով մտնում է աստիճանաբար խորացող կիրճ և արագընթաց հոսանքով հասնում Երևան։

Երևանի մոտ Հրազդանը գոլսում է գալիս նեղ ապառաժոտ կիրճից և այնուհետև հոսում Մերձարաքսյան հարթությունով, որտեղ նա բաժանվելով բազմաթիվ ջրանցքների վրա, քիչ քանակության ջրով թափվում է Արաքսը։

Դեռ ոչ վաղուց (մինչև Սևանգէսի կառուցումը) Հրազդանը ակունքային՝ մասում հոսում էր դանդաղ, ցածր և ճահճապատափերի միջով և միայն տեղ-տեղ արագ գահավիժումով առաջացնում փոքրիկ ջրվեժներ (Վարսեր գյուղի մոտ): Սակայն լճից ավելի շատ չուր վերցնելու նպատակով արհեստական ջրանցք փորելուց հետո, ճին հռնը և նրան շրջապատող ճահճներն ամբողջովին չորացել են:

Հրազդանը առանց Սևանա լճի, ունի 2560 քառ. կմ ավազան Աջափնյա մասից նա իր մեջ ընդունում է Մարմարիկ գետը, որը սկիզբ է առնում Փամբակի լեռնաշղթայի սիստեմին՝ պատկանող Մաղկունք լեռներից, իսկ ձախափնյա կողմից ընդունում է Երևան քաղաքի միջով անցնող Գետառը, որի նվազ ջրերը տարվա մեծ մասում, դեռ Հրազդանին չհասած, սպառվում են Մերձերևանյան հարթությունում:


Ընդհանուր առմամբ Հրազդանն աջ կողմից ավելի շատ է մաս կերպութային ջրեր ստանում, քան ձախակողմյան ափերից, որով հետև գետի ավազանն այս մասում հիմնականում կազմված է ջրամերժ ապառներից, իսկ ձախակողմյան մասը՝ ճեղքված և խիստ ծագութեան անդեպիտ-բազալտային լավաներից։ Այդ պատճառով գետի ձախակողմյան ավազանում հալոցքային և անձրևային ջրերը կորչում են գետնի ճեղքվածներում և ապա ուելքի թեքության հետեւ լավային ծածկի տակով որոշ տարածություն անցնելուց հետո, Հրազդանի հովտում երկրի մակերես են դուրս գալիս որպես հորդառատ աղբյուրներ, որոնցից առանձին դեպքերում ձևավորվում են գետակներ, մինչդեռ աջափնյա մասում գրեթե ոչ մի աղբյուր չեն հանդիպում։ Հրազդանի մեջ թափվող ջրերի քանակը մինչև Երեվան աստիճանաբար ավելանում է, որից հետո սկսում է նրանց արագ սպառումը Մերձարաքսյան հարթությունում։

Հրազդան գետից դեռ հնագույն ժամանակներից անց են կացվել բազմաթիվ ջրանցքներ, փոքրիկ առուներ։ Կարմիր բլուրից հյուսիս-արևմուտք հայտնաբերված են ստորերկրյա թունելանման ջրանցքներ, որոնցով դեռ մեր թվականությունից առաջ ուրարտացիք իրենց այգիներն ու արտերը ջրելու համար Հրազդանից չուր են տարել։ Դրանց շնորհիվ Արարատյան դաշտը ամենուրեք ծածկվել է կանաչով, մրգատու այգիներով և գյուղատնտեսական բազմա-

պիսի կուլտուրաներով: Այդ առուների մեծ մասը ներկայումս եղած բապատված է բրգաձև բարդիներով:

Առաջներում, երբ դեռ չկային Արարատյան դաշտի ժամանակակից խոշոր ջրանցքները, առուներն անց էին կացնում նաև ստորերկրյա ներքուղիներով:

Առանց ոռոգման ջրանցքների Արարատյան դաշտը ներկայացնում է շոր անապատ: Ոռոգման նպատակով Հրազդան գետից անց են կացվել շատ ջրանցքներ, ինչպես օրինակ՝ Մտորին Զանդվի, Էջմիածնի, Նորքի ջրանցքները և այլն: Նրանց ջրերով ոռոգ-



Նկար 3. Հրազդան գետի կիրճ մերձերևանյան շրջանում:

վում են Երևանի մերձքաղաքային և Արարատյան դաշտի խաղողի և պտղատու այգիները, բանջարանոցները, բամբակի և մյուս կուլտուրաների ցանքերը: Արագածի հատկապես ցածրադիր լեռնալան-

ջերի, ինչպես նաև Եղվարդի անջրդի Հողերը ոռոգելու նպատակով կառուցվել է Արզնի-Շամիրամի խոշոր ջրանցքը:

Միաժամանակ հաշվի առնելով Հրազդանի մեծ և աստիճանաձև անկումը (տեղ-տեղ մեկ կիլոմետրի վրա այն հասնում է մինչև 15—16 մետրի), Սովետական իշխանության ջանքերով կառուցվել է էլեկտրակայանների մի ամբողջ խումբ, որոնց ամբողջական սիստեմը մի ընդհանուր անոնով կոշվում է Սևան-Հրազդանի կասկադ: Կառուցվել են երեանի I և II, Քանաքեռի կամաց ամենամեծը՝ Վարդենիսի, Աթարբեկյանի, Սևանա լճային Հիդրոէլեկտրակայանները, որոնց կարողությունները միասին վեցքած գերազանցում են Դնիպրովիչսի կարողությանը:

Հրազդան գետը ձախափնյա մասում ունի մի քանի վտակներ, որոնք բոլորն ել հիմնականում սնվում են աղբյուրների ջրերով: Սովորական պայմաններում նրանք երևում են ինչպես առվակներ, սակայն հաճախ տեղատարափ անձրենների ժամանակ արտակարգ կերպով վարարում են, դուրս գալիս իրենց ափերից և խոշոր ավերածություններ կատարում: Գրանցից են Գետառ, Ջրվեժ, Շորադրյուր և Քեթրան գետակները:

Գետար սկիզբ է առնում Քառասուն-ակն (Կըրխբուզաղ) աղբյուրներից: Գարնան ձնհալի, ինչպես նաև ամռան հորդապատ անձրենների շրջանում սաստիկ վարարում է և երբեմն հեղեղում ափամերձ տարածությունները: Գետառն անցնում է Ավանի գոգահովտով, Ավան գյուղից մի փոքր հարավ կտրում է Քանաքեռ-Թեղուրաբադ սարահարթը և այդտեղ առաջացնում նորքի հայտնի խոր ձորը, որի ուղղահայց կերպով վեր բարձրացող պատերը երբեմն հասնում են 100 մետրից ավելի բարձրության: Նորքի ձորն անցնելուց հետո Գետառը դուրս է գալիս Մերձերևանյան հարթությունը և ապա Շենգավիթ գյուղի մոտ թափվում Հրազդան գետը:

Գետառի վտակներից են Ջրվեժը (Թեղրաբաղը) և Շորադրյուրը: Առաջինն սկիզբ է առնում Ջորապբյուր գյուղի ստորերկրյա ջրերից և մինչև Ջրվեժ գյուղը հոսում է փոքր խորության գետահովտով: Ջրվեժ գյուղի մոտից սկսած (նրանից մի փոքր հյուսիսից), որտեղ առաջացրել է 10 մետր բարձրությամբ ջրթափ, նա հոսում է սիստեմատիկաբար խորացվող նեղ կիրճով: Երեանի ծալքամասում, Կոմերիտմիության անվան լճից ոչ հեռու, Ջրվեժ գետակը միանում է Շորադրյուրին: Վերջինս սնվում է Ողջաբերդ գյուղի

աղբյուրներից: Արհեստական առուների միջոցով ջրվեժ գետակը ցամաքացվում է Մերձերևանյան հարթավայրի սահմաններում:

Հրազդանի ձախափնյա համեմատաբար կայուն հոսք ունեցող վտակներից է Ախտան, որը սկիզբ է առնում Վերին Ախտա գյուղի շրջակայքի մի քանի փոքր աղբյուրներից և հյուսիս-արևմտյան ուղղությամբ 6-7 կիլոմետր տարածություն անցնելուց հետո՝ թափվում Հրազդան:

Հրազդանի մյուս փոքր վտակներից է Քերքան գետակը, որը հիմնականում սնվում է Գեղամա լեռների արևմտյան լանջերի Քառասուն-ակն աղբյուրներից: Վերին հոսանքում նա անցնում է բոլորովին անմշակ, մասամբ ճահճացած հարթ տարածությունով էլառ գյուղից ոչ հեռու, Երևան—Սևան խճուղին կտրելուց հետո, անցնում է բաղալտային լանջեր ունեցող խորը կիրճով և Գետամեջ գյուղի մոտ խառնվում Հրազդանին:

Ընդհանուր առմամբ Հրազդանի ձախափնյա վտակները բոլորն էլ սակավազուր են: Նրանք աշխուժանում են հատկապես գարնան ձնհալի և մասամբ աշնան անձրևների ժամանակի: Ամռանը համարյա բոլորն էլ ցամաքում են՝ մասամբ ոռոգումների և մասամբ էլ ուժեղ գոլորշիացումների պատճառով:

Հրազդանի սիստեմում առավել մեծ վտակներից նրա աշափնյա մասում համարվում է Մարմարիկը, որն ունի ընդամենը 35 կմ երկարություն:

Պարզված է, որ Հրազդան գետի բնական հոսքը Սևանա լճից ավելի քիչ քանակությամբ է ջուր ստանում, քան Մարմարիկ գետակից, չնայած վերջինիս ավազանը կազմում է ընդամենը 412 քառ. կմ տարածություն, իսկ Սևանինը, ներտառյալ նաև լճի մակերեսը՝ 4891 քառ. կմ:

Հրազդանը զգալի շափով սնվում է նաև իր ձախափնյա աղբյուրներից, որոնցից մի քանիսը իրենց հերթին սնվում են Սևանա լճի ներծծվող ջրերից: Առա թե ինչու լճի մակարդակի իջեցման հետևանքով այդ աղբյուրները աստիճանաբար ցամաքում են:

Հրազդանը բացառիկ կարևորություն է ներկայացնում Երևանի համար: Այդ ոչ միայն այն իմաստով, որ նա այժմ անցնում է քաղաքի միջով և նշանակալից շափով դրականորեն է ազդում իր հովտի կլիմայական պայմանների վրա, այլև այն պատճառով, որ նա իր յուրօրինակ գեղատեսիլ բնությամբ, շրջապատի այգիներով և

արհեստական այլ կառուցումներով հանդիսանում է Երևանի բնակչության ամենասիրած հանգստավայրերից մեկը: Ներկայումս Երևանի բարեկարգման պահանջները հաշվի առնելով, նախատիւնված է Հրազդան գետի հունը Երևանի սահմաններում ապահովել մշտապես հոսող ջրով: Կառուցվելու են երկու տասնյակից ավելի պատվար-պատնեշներ, որոնք ստեղծելու են աստիճանաձև միշտաքը մեծ և փոքր ջրային ավազաններ: Նրանք օժտված են լինելու ափամերձ մասում ծառազարդ հովանիներով, ինչպես նաև լողավազաններով: Նախատեսվող ավազաններում ջուրը լինելու է անհամեմատ վճիռ, որովհետև հովտի ավելի բարձր տեղամասում գործելու են ջուրը պարզեցնող ջրամբարներ:

Ա.Զ.Ա.Տ ԳԵՏՔ

Ազատ գետի հովտի հետ կապված են հայ ժողովրդի պատմության հնագույն հիշատակությունները: Այստեղ, դեռ մինչ մեր թվականությունը գոյություն է ունեցել Գառնի քաղաքը: Ներկայումս Գառնի ամրոցի և նույն անունը կրող գյուղի տեղամասում կատարված պեղումները հայտնաբերել են հնագույն քաղաքի հրաշակերտ կոթողներ, ինչպես նաև հայկական և հոռմեական ճարտարապետության բազմաթիվ նրագեղ նմուշներ:

Ազատ գետի վերին հովտում գտնվում է Գեղարդի վանքը, որը մինչև այժմ էլ մեծ զարմանք է պատճառում այստեղ այցելության եկած յուրաքանչյուր ճանապարհորդի: Վանքի մի մասը կառուցված է փորված ժայռի մեջ:

Ազատ գետը կազմված է լեռնային մի քանի վտակներից: Որոնք սկիզբ են առնում Գեղամա լեռներից, հիմնականում Սպիտակասարի և Գեղասարի լեռնագագաթների մոտ 3200 մետր բարձրությունից: և Արաքսի մեջ թափվում ծովի նկատմամբ 800 մետր բարձրություն ունեցող հարթ տարածության վրա: Գետն ունի 56 կիլոմետր երկարություն և 548 քառ. կիլոմետր ավազան:

Ազատ գետը արագավազ և սահանքավոր գետ է: Նա մինչև Արևշատ գյուղը հոսում է ապառաժոտ, որոշ տեղերում համարյա գծվարանցանելի կիրճի միջով և միայն ստորին հոսանքում, երբ արդեն գուրս է գալիս Արարատյան դաշտը, փոքր տարածության

Վրա հոսում է դանդաղ, ցածրադիր ափերով, անաղմուկ հասնում մինչև Արաքսը:

Գետահովիտն ամենուրեք ուղեկցվում է փլուզումների հետևանքով առաջացած հսկայական մեծության հասնող ժայռային բեկորներով:

Առանձնապես արտասովոր վեհովթյամբ աշքի է ընկնում Ազատ գետի հովիտը Գողթ գյուղից վերև: Այստեղ սկզբնական վտակների միջև ընկած են տարօրինակ ձևով վեր բարձրացած մի շարք լեռնաբազուկներ, որոնց սուր ատամնավոր կատարները զառիվեր լանջով իջնում են դեպի կից հովիտները, առաջացնելով անդրնդախոր կիրճեր և ձորեր:

Գեղատեսիլ ու խոր կիրճերը, ամենաբազմազան ձևերով արտահայտված լեռկ ժայռերը, տեղ-տեղ դեպի ձորն իջնող անտառակները և մեծ բարձրությունից գահավիժող սահանքավոր ջրերը, Ազատ գետի հովիտին տալիս են յուրօրինակ գրավիչ առանձնահատկություն:

Ազատ գետի հովիտը մի փոքր ընդարձակվում է Գառնի գյուղի մոտ, բայց այստեղ էլ գետի կատաղած ջրերը խոյանում են խորը ձորով և մոլեզնորեն զարնվելով ժայռոտ ափերին, պոկում են հսկայական մեծության քարեր ու կոտակում գետի հատակին:

Ազատը սրբնթաց լեռնային գետ է մինչև Արևածառ գյուղը: Արևաշտ գյուղից սկսած Մերձարաքսյան հարթությունում նաև բաժանվում է առվակների և ամռանը ոռոգումների պատճառով ցամաքում դեռ Արաքսը շհասած:

Գառնի գյուղից ներքև Ազատ գետն այլևս ոչ մի վտակ չի ընդունում, եթե նկատի չունենանք նրա աջակողմյան մասում Չոր-Սելավ գետակը և նույնաբնույթ ժամանակավոր հոսք ունեցող հեղեղատային մի քանի այլ վտակներ, որոնք բոլորն էլ ձնհալի և անձրւների ժամանակ սկիզբ են անում Գեղամա լեռների Ողջաբերդ լեռնաբազուկից:

Մեծիմի բնույթով Ազատ գետը աշքի է ընկնում իր հոսքի զարմանալի կանոնավորությամբ: Այդ անշուշտ պիտի բացատրել աղբյուրներից ստացվող ջրերի այն հսկայական քանակով, որով սնվում է գետը: Այդ տեսակետից առանձնապես հայտնի են գետի աջափնյա մասում, լավային ծածկի տակից գետնի մակերես դուրս եկող Գողթ գյուղի աղբյուրները: Ոչ պակաս ջրառատությամբ աշքի

են ընկնում նաև տարբեր բարձրություններից հոսող Գառնիի աղբյուրները։ Կարելի է ենթադրել, որ այդքան շատ ջրառատ աղբյուրները սնվում են ոչ միայն Ազատ գետի ավազանում թափառ մթնոլորտային տեղումներից, այլև մասամբ ստորերկրյա անցքեռով անցնող Սևանա լճի ջրերից։

ՎԵԴԻ ԳԵՏԸ

Վեդի գետը հոսում է Ազատ գետին համարյա զուգահեռ, նրանից հարավ՝ Սկիզբ է առնում Գեղամա լեռների Արքաշեն և Գնդասար լեռնագագաթների արևմտյան 2800-ից մինչև 3000 մետր բարձրության հասնող լեռնալանջերից։ Ուրապտույտ ընթացքով, միանգամայն վայրի բնական լանդշաֆտով 58 կիլոմետր տարածություն անցնելուց հետո նա թափվում է Արաքս գետը։

Վեդի գետի սկզբնական հովիտը ներկայացնում է նեղ կիրճ։ Նրա հատակը, ինչպես նաև ափերը ծածկված են գլաքարերի հսկայական կուտակումներով։

Վեդի գետի հովիտը մինչև Զիմանքենդ գյուղը ուշագրավ է իուվիթիսարի՝ մինչև 500—600 մետր խորության հասնող գժվարանցանելի նեղ կիրճերով, որից հետո եղրամասային լեռներն աստիճանաբար հեռանում են, իսկ հովիտը լայնանում, լանջերը ցածրանում և ողողատի լայնությունը տեղ-տեղ հասնում է մինչև 89 մետրի։ Վեդի գյուղի մոտ գետը զուրս է զալիս հարթավայր։ Քանի որ այստեղ ամռան ընթացքում նրա ջրերն օգտագործվում են ոռոգման համար, ուստի Ազատ գետի նման դեռ Արաքսը հասած, բաժանվում է առվակների և գլխավորապես փուխր գհտնահողի պատճառով ցամաքում է։

Ենթադրվում է, որ անցյալում Վեդի գետը ավելի ջրառատ է եղել և այդ հավանաբար այն պատճառով, որ Սևանա լճի ավագանին պատկանող Արքաշեն լեռան աղբյուրների մի մասը առհետական առուներով հոսել է դեպի Վեդի գետը։ Սակայն հետագայում այդ կառուցվածքներն ավերվել են, առուները լցվել են ավաղով, տղմակալվել և անխնամ մնալու հետեանքով շարքից դուրս եկել։ Ներկայումս հաշվի առնելով գետի ստորին ավագանում տեխնիկական կուլտուրաների զարգացման համար ջրի-

խիստ պակասը, միանգամայն կարևոր է վերականդնել այդ առուները:

Վեզի գետի սխատեմի մեջ մտնում են մի քանի փոքր վտակ՝ ներ: Դրանց թվում հիշատակության արժանի է Խոսրովագետը, որը գոյանում է Գեղամա լեռների վճիտ ու սառնորակ աղբյուրներից: Հովտում գետի կանաչապատ ափերի երկու կողմերում տարածվում են անտառապատ լեռնալանջերը: Այստեղ ամենուրեք բարձրանում են բարձրաբերձ լեռներ, ծգվում նեղ ձորակներ և նրանց միջով մեղմ կարկաչով հոսում են փոքրիկ առվակներ, որոնց մեջ խայտում են ձկների մի քանի տեսակները՝ կարմրախայտը, բեղլուն: Հմայիչ է գետահովտի բնությունը իր անզուգական գեղեցկությամբ:

Խոսրովագետի ավազանը միակ անտառապատ շրջանն է Գեղամա լեռների հարավ-արևմտյան շրջանում: Նոսր այդ անտառը դեռևս մեր թվականության 5-րդ դարում հիմնել է հայոց Խոսրով թագավորը, որի անունով էլ կոչվում է «Խոսրովի անտառ»: Այստեղ այժմ տիրապետում են կաղնու, բոխու տնկարանները, որոնք մեջընդէջ փոխարինվում են գիհու ծառերով: Հանդիպում են նաև հացենի, կեշի և ուրիշ ծառեր:

Խոսրովագետի հովիտը, շրջապատի ամբողջ անտառային տարածության հետ միասին, այժմ վերածվել է պետական արգելավայրի, որտեղ պահպանվում են հայկական լեռնաշխարհին բնուրոշ կենդանական աշխարհի բազմազան տեսակները: Այստեղ կան հովազներ, ընձառյուծներ, վարազներ, գայլեր, արջեր, աղվեսներ, լուսաններ, փորսողներ, հայկական վայրի ոչխարներ: Դրանց թվում վերջերս ավելացան Հեռավոր Արևելքից բերված ուստուրական բծավոր եղջերուները:

ԱՐՓԱԿ ԳԵՏԸ


Արփակ գետը սկիզբ է առնում Ջանգեղուր և Վարդենիս լեռնաշղթաների հորդաբուխ աղբյուրներից, ինչպես նաև այդ նույն լեռներում տեսականորեն պահպանվող ձյան հալոցքային ջրերից: Գետի վերին հոսանքը անցնում է փոքր թեքություն ունեցող սարահարթով: Սակայն դեռ ջերմուկ առողջարանը չհասած (նրանից մի փոքր վերև) սրբնթաց գահավիժում է անտառապատ կիրճը և ապա-

փոխելով իր ընթացքը դեպի արևմուտք, ոլորապտույտ հունով շաբառունակում մինչև Արենի գյուղը:

Արփա գետի ստորին հոսանքն անցնում է Շարուրի հարթավայրով: Մինչև Շարուրի գաշտը՝ Արփան հոսում է անտառապատճորը և նեղ կիրճերով: Չայքենդ գյուղի մոտ նա ընդունում է միքանի վտակներ և դառնում ավելի ջրառատ, բայց ընդհանուր առամամբ հոսում է նեղ հունով և արագընթաց, որի հետևանքով անցումները դառնում են ծայրաստիճան դժվար գետի հունում մեծքանակությամբ կուտակված քարերի պատճառով:

Արփան ունի 126 կիլոմետր երկարություն և մոտ 2600 քառակիլոմետր տարածությամբ ջրհավաք մակերես:

Արփա գետի սիստեմին են պատկանում շատ վտակներ, նրանցից աջակողմյան մասում հայտնի է Եղեգիս գետակը, որին մի



Նկար 4. Արփա գետը Ջերմուկ տուողաբանի մոտ:

քանի հեղինակներ համարում են ոչ թե վտակ, այլ Արփայի երկարորդ ակունքը: Եղեգիսը սկիզբ է առնում Վարդենիսի հարավային լեռնալանջերից և մայր գետակին է միանում Արփա գյուղից 10 կմ վերև:

Արփա գետը դեռ հնագույն ժամանակներից ունեցել է ոռոգման համար տնտեսական խոշոր նշանակություն, այդ պատճա-

ռով նրա ջրերի քանակը ավելացնելու համար կառուցել են արհեստական ջրամբարներ, որտեղ կուտակել են գարնանային և անձրևային ջրերը: Այդ ջրամբարներից մի քանիսի հետքերը մինչև այժմ էլ լավ պահպանված են: Ներկայումս Արփա գետի ջրերը ստորին հոսանքում բաժանվում են բազմաթիվ արհեստական առուների վրա և ամուսն երկրորդ կեսից ամբողջությամբ օգտագործվում այդիներն ու ցանքատարածությունները ոռոգելու համար: Արփայի ջրերով են աշխատում Միկոյանի և Աղիզբեկովի էլեկտրակայանները:

Արտակարգ գեղեցիկ է Արփա գետի հովիտը հատկապես ջերամուկ առողջարանի մոտ: Այստեղ, դեպի գետահովիտն իջնող սարալանջերը ծածկված են անտառով, իսկ բացատները՝ ալպյան մարգագետիններով, որտեղ վառ գույնի բազմերանգ ծաղկիների արտասովոր առատությունից տեղանքն ստանում է նախշուն գորգերի տեսքը: Ջերմուկն իրենից ներկայացնում է մի աննման ծիծաղկոտ կանաչ օազիս: Նրա մոտ Արփա գետը հոսում է խոր, գեղատեսիլ ձորով: Չորրի երկողմի լանջերից սկիզբ են առնում բազմաթիվ սառնորակ աղբյուրներ, որոնցից առաջացած փոքրիկ առվակները մեղմ կարկաչով վագում են դեպի Արփա գետը: Ուշագրավ են հատկապես առողջարանի աջակողմյան աղբյուրները, որոնցից առաջցել է փոքրիկ մի լճակ: Նրանից արտահոսող գետակը մոտ 60 մետր բարձրությունից գահավիժում է Արփա, առաջացնելով յուրօրինակ գեղեցկությամբ՝ մի ջրվիժ:

Հետաքրքիր է այն, որ սառնորակ այդ աղբյուրների հենց կողքին գետնի մակերեսն են դուրս գալիս $61-64^{\circ}$ ջերմություն ունեցող հանքային տաք ջրեր: Հանքային այդ ջրերի բուժիչ հատկությունը հայտնի է եղել գեռ 13-րդ դարից: Այդ մասին վկայություններ է տալիս Ստեփանոս Օրբելյանը: Նրա «Պատմություն նահանգի Սիսական» աշխատությունից երեսում է, որ ներկայիս ջերամարքյուրների մոտ հնում եղել է ջերմուկ անունով հայկական մի պյուղ: Գյուղի և հանքային ջրերի անունները հետագայում: ադրբաբեցանական լեզվով կոչվել է իստի-սուր

Ողջի գետը համարվում է Զանգեզուրի երկրորդ մեծ գետը, որն ունի 85 կիլոմետր երկարություն: Նա սկիզբ է առնում Կապուտջուղի գրեթե մշտապես ձյունածածկ գագաթից: Մեծ մասամբ հոսում է անտառապատ հովտով, Ղափան քաղաքից արևելք անցնում է Աղբքեջանական ՍՍՌ-ի տերիտորիան և թափվում Արաքսը:

Ողջի գետի սիստեմին է պատկանում Գեղի վտակը, որը սկիզբ է առնում Զանգեզուրի երկաթասար լեռնագագաթից: Ողջի գետը առանձնապես արագահոս է վերին հոսանքում, որտեղ նրա անկումը 1 կիլոմետրի վրա հասնում է 60 մետրի, մնացած մասում՝ 30 մետրի և ավելի պակաս: Ողջիի ջրերով աշխատում են Ղափանի և Զրախորի հիդրոկայանները, որոնք մեծ մասամբ սպասարկում են Ղափանի արդյունաբերական ձեռնարկություններին:

Հիասքանչ բնություն ունի Ողջի գետի հովիտը: Ամենուրեք գետի երկու կողմից վեր են խոյանում բարձրաբերձ լեռներ, որոնք մերթ ընդ մերթ սեղմվելով իրար, ծայրաստիճան նեղացնում են հովիտը և այն վերածում ահավոր անդունդի: Կաշկանդված ամրակուր լեռների գրանիտյա ժայռերի մեջ, կատաղած գետը փրփրալից ալիքներով զարնվում է ափից ափ և ահավոր գոռում գոշումով լեռներից պոկում հսկայական ժայռեր, մանրացնում դրանք և տանում հասցնում մինչև Մայր Արաքսը:

Սկզբնավորման մասում՝ Կապուտջուղի և Յաղլի սարերի ստորոտներում, հովիտը եղրավորող լեռներն ամենուրեք ծածկված են բազմերանգ ծաղիկներով լի մարգագետնային թավիշ բուսականությամբ: Հենց այդ վայրերից էլ ուրախ խոխոչով հոսում են Հարյուրավոր սառնորակ աղբյուրներ, որոնցով և սնվում է Ողջի գետը:

Որսանը Զանգեզուրի ամենամեծ գետն է, իսկ Զանգեզուրը Հայաստանում բնական պայմանների բազմազանությամբ և հակադրություններով ամենից հարուստ վայրերից մեկը: Այստեղ կան 3000-ից մինչև 3900 մետր բարձրության հասնող շատ սրածայր լեռնագագաթներ, նրանց կողքին հաճախ կարելի է հանդիպել գեղատեսիլ անդնդախոր ձորերի, որոնց միջով ոլորապտույտ գա-

Հարումներով, մերթ կատաղի ու աղմկահույզ, մերթ հանգիստ ու ծիծաղկոտ դիմուն է հոսում Որոտանը:

Որոտան գետը (որը ստորին հոսանքում կոչվում է Բարգուշատ) սկիզբ է առնում Ղարաբաղի սարահարթի և ջանդեղուրի լեռնաշղթայի մինչև 3000 մետր բարձրության հասնող լեռնալանջերից Գետն ունի մոտ 189 կիլոմետր երկարություն, որից 126 կիլոմետրն անցնում է Հայաստանի, իսկ մնացածը Աղբքաջանի տերիտորիայով և 5540 քառ. կմ տարածությամբ ավագան: Գետի ակունքները կազմվում են մի շարք փոքր լճերի (օրինակ՝ Խալիս) և աղբյուրների ջրերից:

Գորիսի շրջանում Որոտանը մտնում է Հալիձորի խոր կիրճը, իսկ Տաթևի վանքի մոտ անցնում լեռների միջև իր իսկ առաջացարած բնական անցքով, որը կոչվում է «Սատանայի կամուրջ»:

Որոտանի մեջ են թափվում բազմաթիվ ջրառատ վտակներ, որոնց թվում հայտնի է Հատկապես Շաքի վտակը, որն ամբողջապես ձևավորվում է նույն անունը կրող գյուղի աղբյուրներից: Սիսիանից ոչ հեռու նա առաջացնում է Հայաստանում թերևս ամենից ավելի խոշոր ու գեղեցիկ ջրվեժը: Ներկայումս Շաքի ջրերով աշխատում է Շաքի Էլեկտրակայանը:

Որոտանի մյուս վտակներից աջափնյա մասում հայտնի են Գորիս և Խնձորեսկ գետակները:

Որոտան գետը մեծ մասամբ հոսում է սահանքներով ու աստիճանածկ անկումներով: Նրա անկումը հոսանքի տարրեր հատվածներում մեկ կիլոմետրի վրա տատանվում է 10—35 մետր: Նկատի ունենալով Որոտան գետի մեծ էներգոսուրսները, նախատեսված է նրա վրա, սանդուղքաձև դասավորությամբ, Հրազդան գետի օրինակով, կառուցել մի շարք հիդրոէլեկտրակայաններ, որոնցից 3-ը Հայկական ՍՍՌ-ում և մնացածը (կասկադի կարողության 28 տոկոսի չափով) Աղբեկանում: Առաջնեկը լինելու է կասկադի ամենից ավելի հզոր Տաթևի հիդրոէլեկտրակայանը, որը կառուցվելու է 7-ամյակի ընթացքում և ունենալու է 208 հազար կիլովտա կարողություն: Որոտանի ջրերով միաժամանակ ոռոգվելու են Գորիսի և Սիսիանի շրջանների հողերը:

Որոտանը Հայաստանի մյուս գետերի համեմատությամբ այն առավելությունը ունի, որ նա կարող է գարնանային վարարուն ջրերը կուտակել հարմար ավաղաններում և ապա սակավաջուր

ամիսներին կարգավորել իր վրա կառուցված հիդրոէլեկտրակառանների աշխատանքը:

Որոտանի հովտի բնական պայմանները թույլ են տալիս ստեղծելու շորս խոշոր ջրամբարներ, որոնք հիդրոէներգիայի համար կարգավորիչների գեր կատարելուց բացի, կարևոր նշանակություն կարող են ունենալ նաև ձկնաբուծության և ձկնորսության դարգացման համար:

Ջրամբարների ստեղծումը կապված է բարձր պատվարների և մի շարք բարդ տեխնիկական խնդիրների լուծման հետ: Անշուշտայդ հանդամանքը ոժվարացնում և թանկացնում է նախագծվող հիդրոէլեկտրակայանների շինարարությունը, բայց Որոտանի վրա ամբողջական կասկադի ավարտումը հնարավորություն կտա հիդրոէներգետիկ ուսուրաների ուցիոնալ օգտագործմամբ խոշոր շատ փերով զարգացել հարավային Հայաստանի լեռնագործական արդյունաբերությունը, առանձնապես գունավոր մետալուրգիան:

Հայկական ՍՍՌ-ում Որոտանի վերին հոսանքում նախատեսվող Սպանդարյանի ճճալվազանը կառուցվելու է ծովի մակերեսույթից 2065 մետր բարձրության վրա և ունենալու է 74 մետր բարձրության ամբարտակ: Ավելի ցածր կառուցվելու է Անգեղակոթի ջրամբարը, որի ամբարտակը ունենալու է 103 մետր բարձրություն, այնուհետև՝ Տաթեկի և Տոլորսի ջրամբարները: Դրանք բոլորը միասին կունենան մոտ 660 միլիոն խորանարդ մետր ջրածավալ: Տոլորսի ջրամբարում նախատեսված է հավաքել Որոտանի աջափնյա վտակ Միսիան գետի գարնանային ջրերը, որոնք օգտագործվելու են Տաթեկի հիդրոէլեկտրակայանի համար:

Խոշոր ջրամբարների ստեղծման կապակցությամբ նախատեսված է գետի վերին և միջին հոսանքում ջրասույղ անհել մի քանի գյուղական վայրեր և նրանց բնակիչներին տեղափոխել նոր կառուցվող ավանները: Այդ ջրամբարներից միաժամանակ կանցկացվեն մի շարք ջրանցքներ, որոնցով կոռոգվեն Միսիանի և Գորիսի շրջանների բազմաթիվ գյուղերի հողերը:

Որոտանի պրոբլեմի հետ կապված նախագծումների իրականացումից հետո նշանակալի շափով կփոփոխվի նաև Զանգեզուրի քարտեզը: Կանհետանան մի շարք գյուղեր, կստեղծվեն նոր ավաններ, գործարաններ, խոշոր ջրավազաններ, ջրանցքներ, ճանապարհեր:

2. ՍԵՎԱՆԱ. ԼՃԻ ԱՎԱԶԱՆԻ ԳԵՏԵՐԸ

Սևանա լիճը գրավում է 1416 քառակուսի կիլոմետր տարածություն և համարվում է աշխարհի լեռնային ամենաբարձր լճեղից մեկը:

Սևանի մեջ թափվում են 30-ից ավելի գետեր և գետակներ, իսկ դուրս է հոսում միայն Հրազդանը:

Գետերով աղքատ է հիմնականում Սևանի ավաղանի Գեղամա լեռների շրջանը: Այստեղ հսկայական քանակությամբ անձրեավային, ինչպես նաև ձնհալքի շրերը արագ կերպով ներծծվում են գետնի խորքը, ճեղքերի միջով հոսում մինչև ջրամերժ շերտը և ապա ուելֆի թերության համապատասխան շարժվում դեպի լեռների ստորոտները: Լեռների ստորոտներում՝ կիրճերի և ձորերի սահմաններում նրանք մեծ մասամբ դուրս են գալիս երկրի մտեկերես որպես աղբյուրներ: Եվ որովհետև Սևանա լճի գետերի մի զգալի մասը հիմնականում սնվում է հենց այդ աղբյուրների շրերով, այդ պատճառով էլ նրանք աշքի են ընկնում կայուն հոսքով և միանգամայն մաքուր ու վճիռ շրերով:

Սևանի ավաղանի առավել խոշոր գետերից են հետեւյալները:

Գալաքիտը: Նա սկիզբ է առնում Գեղամա լեռների Աժադահանակ լեռնագագաթից, անցնում Կամո քաղաքով և ապա Նորագուղ գյուղի մոտ թափվում Սևանա լիճը: Վերին մասում նա հոսում է սիղապատ թեք լանջեր ունեցող հովհաններով, իսկ ներքին հոսանքում՝ Մերձճային ընդարձակ հարթությունով: Գալաքիտը ունի մոտ 40 կիլոմետր երկարություն:

Արգինի գետը սկիզբ է առնում Գեղամա լեռների ծայր հարավ-արեւելյան լանջերից և համարվում է Սևանա լճի հարավային մասի ամենաջրառատ գետերից մեկը: Վերին հոսանքում Արգինի գետի և նրա վտակների ամբողջ հովհաններում է մի լեռնագոգ ընդարձակ հարթություն, որն ամուանը ամբողջությամբ ծածկվում է մարգագետնային բուսականությամբ: Նրանց միջով ոլորապտույտ ափագծով, մարդու տեսողության համար գրեթե աննկատելի, մեղմ գալարումներով հոսում է Արգինի գետը:

Միջին հոսանքում Արգինի գետն աստիճանաբար խորացնելով իր հունը՝ մեծացնում է իր արագությունը և հոսում նեղ, աեղ-տեղ խոր կիրճերով: Ստորին հոսանքում Արգինին մուտք է գործում:

մերձլճային հարթությունը։ Այստեղ գետը կրկին հոսում է դանդաղ՝ ոչ այնքան բարձր ակումուլյատիվ դարավանդային լայն հովտով։ Գետի ջրերի արագությունը նվազելու հետևանքով Արգիծին այստեղ կուտակել է մեծ քանակությամբ կարծր նյութեր և ապա նրանցից տեղ-տեղ ստեղծել կոնաձև փոքր բարձրություններ։ Արգիծի գետի հովիտն այս մասում աշքի է ընկնում հողերի զգալի ճահճացմամբ։ Բայտ որում հողերի այդ տիպի առաջացմանը նպաստել է ոչ միայն այդ մասով անցնող Արգիծի գետը, այլև անդեպիտ-բազալտային ծածկի տակից վեր ելնող գետնաջրերը, որոնք որպես շատ առատ աղբյուրներ երևան են գալիս Ներքին Գետաշեն գյուղի շրջանում։ Ներկայումս Սևանա լճի մակարդակի իջեցման հետևանքով այդ ճահճները զգալի չափով պակասել են։ Արգիծի գետն ունի մոտ 42 կիլոմետր, երկարություն։

Մասրիկը (Մազրա) համարվում է Սևանա ավագանի հարավային մասի երկրորդ մեծ գետը։ Նա սկիզբ է առնում Զանգեզուրի լեռների հյուսիս-արևմտյան լանջերից և մոտ 40 կիլոմետր անցնելուց հետո հանգիստ հոսքով թափվում է Սևանա լիճը։ Դեռ ոչ շատ առաջ Մասրիկը Սևան էր հասնում Գիլլի ճահճապատ լճի միջով։ Ներկայումս Սևանա լճի մակարդակի իջեցման հետևանքով Գիլլի փոքրիկ լիճը, ինչպես նաև նրա մերձակա ճահճային տարածությունները գրեթե չորացել են։

Մասրիկի ակունքները ներկայացնում են աղբյուրներից սընվող բազմաթիվ առվակներ, որոնք միավորվում և մի ամբողջական գետ են գառնում միայն հարթավայրային մասում։ Ի տարբերություն Սևանա լճի մյուս գետերի, Մասրիկը հոսում է շատ ավելի դանդաղ, թերևս այդ պատճառով էլ նրա հովիտը զգալի չափով ճահճացած է։

Սևանա լճի հարավային մասի մյուս գետերը մեծ մասամբ արագավագ են և սահանքավոր։ Նրանք հոսում են առավելապես նեղ կիրճերի միջով և միայն ստորին հոսանքում անաղմուկ թափվում Սևանա լիճը։ Այսօրինակ գետերից են Վարդենիս, Ալուշալու, Զոլաքար, Քեթի, Աստղաձոր և ավելի փոքր մի քանի ուղիղ գետակներ։ Դրանց բոլորի համար բնորոշը հանդիսանում է՝ աստիճանաձև անկումը, բավականին երկար լայն հովիտները և հոսքի առավել հաստատուն ուժիմբ։ Գետերը համեմատարար կայուն հոսք ունեն, որովհետև նրանք սնվում են ջրառատ աղբյուրներից

և ընդհուպ մինչև ամառը բժիրի ձեռվ պահպանվող ձյան հալոցքաշին ջրերից:

Սևանա լճի արեելյան մասի՝ Արեգունի և Սևանա լեռնաշղթաներից սկզբնավորվող գետերը (Թոխլուզա, Սատանախաչ, Փամբակ և այլն) հոսում են շատ կարծ տարածության վրա, յուրաքանչյուրը ոչ ավելի 4—6 կիլոմետր երկարությամբ, որոնք սակայն աշքի են ընկնում մեծ անկումով: Նրանց անկումը խիստ նվազում է միայն մերձային հարթությունում: Այստեղ նրանք կուտակել են գլաքարեր և ավագ, որի հետևանքով առավել փոքր գետերը ամունամիսներին համարյա ամբողջովին ցամաքում են դեռ լիճը չհասած: Ընդհանուր առմամբ նշված գետերը սակավացուր են, միայն գարնան ամիսներին նրանք հորդանում են ձնհալքից և անձրևային տեղումներից:

Զկնագետը համարվում է Սևանա ավազանի ամենահյուսիսային գետը: Նա սկիզբ է առնում Սևանա ավազանին պատկանող Փամբակ և Արեգունի լեռների լանջերից: Հոսում է ծաղկավետ հովտով: Հատկապես գետի ստորին հոսանքում ամբողջ հարթությունը ներկայացնում է մարգագետնային կանաչ տարածություն:

Սովորությունը մի փոքր հարավ գետը ճյուղավորվելով բաժանվում է երեք բազուկների և թափում Սևանա լիճը: Չնայած ձկնագետի ոչ մեծ երկարությանը (ընդամենը 21 կիլոմետր) նա բավականին ջրառատ է: Չմեռը գետը ծածկվում է սառուցով:

* * *

Սևանա լճի գետերն ունեն տնտեսական կարևոր նշանակություն: Նրանց ջրերը մեծ չափով օգտագործվում են ոռոգման և մասսամբ էլեկտրաէներգիայի ստացման համար: Այդ նպատակով Արգիճի գետի մոտ կառուցված է Մադինայի ջրանցքը և մեկ էլեկտրակայան:

Բազմաթիվ ջրանցքներ են փորկած Քավառագետ և Մասրիկ գետերից: Հիշատակված գետերը միաժամանակ աշքի են ընկնում ձկների առատությամբ:

3. ՔՈՒՌ ԳԵՏԻ ՎՏԱԿՆԵՐԸ

Քուռը Անդրկովկասի ամենամեծ գետն է: Նա և մոտ 1500 կիլոմետր երկարություն և 95 հազար քառ. կմ տարածությամբ ավազան: Սկիզբ է առնում Հայկական լեռնաշխարհից: Քուռ գետի վերին հոսանքն անցնում է Թուրքիայի, իսկ միջին և ստորին հոսանքը Վրացական և Ադրբեյջանական ՍՍՌ-ների տերիտորիաներով: Քուռի սիստեմին են պատկանում բաղմաթիվ վտակներ, որոնց թվում Հայկական ՍՍՌ-ի սահմաններում՝ Դեբեդ, Աղստեր և մի քանի համեմատաբար ավելի փոքր գետեր, որոնք բոլորը միասին գրավում են մոտ 7000 քառ. կմ տարածությամբ ավազան:

ԴԵԲԵԴ ԳԵՏԸ

Դեբեդը կազմվում է Զորագետ և Փամբակ գետերի միացումից և համարվում է Հյուսիսային Հայաստանի ամենաչըրառատ գետը: Նրա երկարությունը (հաշված Փամբակի ակունքներից) հավասար է 178 կմ-ի:

Փամբակ գետը սկիզբ է առնում Զաջուռի լեռնանցքի մոտից և հոսում Բազումի և Փամբակի լեռներին զուգահեռ ուղղությամբ արևմուտքից արևելք մինչև Կիրովական քաղաքը: Կիրովականի մոտ իր մեջ ընդունելով Տանձուտ գետակը, կտրում է Բազումի լեռները և ապա նեղ գետահովտով հասնում մինչև Թումանյան երկաթուղային կայարանը: Թումանյանի կայարանից 2 կիլոմետր հյուսիս միանում է Զորագետին և Դեբեդ անվամբ շարունակվում մինչև Քուռի սիստեմին պատկանող Խրամ վտակը:

Դեբեդի սիստեմին պատկանող մյուս խոշոր գետը համարվում է Զորագետը: Նա երկարությամբ զիշում է Փամբակին, բայց ջրառատությամբ գերազանցում է նրան: Զորագետը սկիզբ է առնում Լոռու սարահարթը եզրապատող լեռներից: Մինչև Ստեփանավան նա հոսում է համեմատաբար հանգիստ, սակայն Ստեփանավանի մոտ աստիճանաբար մեծացնում է իր անկումը և խորանում, առաջացնելով կանյոնային բնույթի խորը կիրճեր, որոնք տեղ-տեղ հասնում են 200-ից մինչև 300 մետր բարձրության:

Դեբեդի ավազանին են պատկանում մի քանի ավելի փոքր վտակներ (Զիշկան, Վանաձոր, Տանձուտ և այլն), որոնք ուժեղ

անձրևների հետևանքով խիստ ավելացնում են Փամբակ և Զորագետ գետերի ջրերը և առաջացնում հեղեղումներ։ Առանձնապես կատաղի է Դեբեդը, որի փրփրալից ջրերը անընդհատ քայլայում են իրենց ափերը և առաջ բերում փլվածքներ և հաճախակի ալեռում արհեստական կառուցումները (կամուրջներ, երկաթուղային գծեր, թմբեր և այլն):

Մեծ հեղեղումներ սովորաբար լինում են գարնանը, երբ արագ ձնհալքին ուղեկցում են մեծ քանակությամբ թափվող անձրևները։ Ներկայումս գետերի ավերածությունները կանխելու համար նրանց ափերը վտանգավոր տեղերում պատճեշավորում են։

Դեբեդի և նրա վտակների նշանակությունը շատ մեծ է որպես Հիդրոէներգիայի աղբյուր։ Մինչև այժմ նրանց վրա կառուցված են մի քանի մեծ և փոքր հիդրոէլեկտրակայաններ, որոնց թվում Զորագէսը, Ագարակի և Ալավերդու էլեկտրակայանները, որոնց թվում Զորագէսը, Ագարակի և Ալավերդու էլեկտրակայանների կառուցում։ Կատարված հետազոտությունների համաձայն Դեբեդ գետի և նրա սիստեմին պատկանող վտակների վրա կարելի է կառուցել կասկադների ձևով մոտ 20 էլեկտրակայան։

Ոչ պակաս կարեոր նշանակություն ունեն Զորագետ և Փամբակ գետերը նաև ոռոգման համար։ Փամբակի վտակների ջրերով է սնվում Նալբանդի ջրանցքը, իսկ Զորագետի վտակներով՝ Լոռոս ջրանցքը։

Փամբակ-Դեբեդի հովտով ձգվում է Երևան—Թբիլիսի երկաթուղին։ Այդ ամբողջ ճանապարհը անցնում է բացառիկ գեղեցիկ վայրերով։ Վեհորեն դեպի Երկինք են խոյանում բարձրաբերձ լիռները, որոնք մերթ ընդ մերթ ընդհատվում են ծառախիտ ձորերով և դեպի գետահովիտն իշնող խոր ու գահավեժ կիրճերով։ Նրանց միջով հոսում են հորդառատ գետակներ, որոնց ջրերով հարստացած Դեբեդը որոտալից աղմուկով զարնվում է ափամերձ ժայռերին, կատաղում, փրփրում և վազում դեպի մայր գետը՝ Խրամը։

Դեբեդի հովտի գրեթե ամբողջ երկարությամբ ձգվող լեռները անտառապատ են։ Տեղ-տեղ անտառից վեր տարածվում են ծաղկավետ ալպյան մարգագետիններ։

Աղստել գետը սկիզբ է առնում Փամբակի լեռնաշղթայի թեք լեռնագագաթից և մեծ մասամբ հոսում նեղ, լեռնային անտառապատ կիրճերով։ Սկզբում նա հոսում է որպես փոքրիկ մի առվակ, սակայն որոշ տարածություն անցնելուց հետո իր մեջ է ընդունում բազմաթիվ նոր ջրեր և Դիլիջանի մոտ արդեն վերափոխվում է լեռնային ջրառատ գետի։ Աղստելի ջրառատությունը շատ ավելի՝ մեծանում է Դիլիջանից 10 կիլոմետր արևելք, երբ նրան է միանում Գետիկը։ Վերջինս սկիզբ է առնում Սևանա լեռների Քաշաթաղ գագաթից և անցնում Արեգունի և Մուրզուզի լեռների միջև ընկած, մեծ մասամբ անտառապատ գեղատեսիլ ձորով։ Ստորին հոսանքով Աղստելը իր մեջ ընդունում է Ջողաս գետակը, որը Հայկական ՍՍՌ-ի տերիտորիայում կոչվում է Ոսկեպար։ Աղստելի երկարությունը 106 կիլոմետր է։

Աղստելի խորությունը մեծ չէ. ըստ որում շատ տեղերում հնարավոր է ոտքով նրա մի ափից անցնել մյուսը, բայց արագածոս է, գարնանային վարարումների ժամանակ՝ կամակոր և վտանգավոր։ Գետը առատ է ձկներով։ Հայտնի է հատկապես կարմրախայտը, որն իր համեղությամբ ոչնչով շի զիջում Սևանի մեծ հոշակ վայելող իշխան ձկան։

Նրա ամբողջ երկարությամբ ձգվում է հաճախ անմիջականորեն դեպի գետը խոնարհված բազմադարյան անտառ՝ կաղնու, հաճարենու, թխկենու, հացենու և այլ զանազան ծառերով, ամենուրեք լսվում է թռչունների գեղեցիկ դայլայլը և բազմերանգ ծաղիկների անուշահոտ բուրմունքը։

Ամունը, երբ Արարատյան դաշտում տիրապետում է անտառների շոգը, Աղստելի հովտի շատ մասերում թագավորում է գարնանային գովություն։ Որպես ամառանոցային վայր, այստեղ շատ հանգստացողներ են գալիս ոչ միայն Արարատյան դաշտից (Երևանից), այլև Վրաստանից (Թբիլիսից) և Ադրբեջանից (Բաքվից)։ Հովտում արտասովոր աշխուժություն է սկսվում հանգստյան օրերին, երբ Երևանից այստեղ են գալիս էքսկուրսանտներ իրենց կիրակնօրյա հանգիստը անցկացնելու համար։

Աղստելի գեղատեսիլ հովտով է անցնում Թբիլիսի և Բաքիստանող Երևան—Աղստել խճուղին։

Քուսի մյուս ավելի փոքր գետերից են Հախումը (որը Աղբբե-
շանական ՍՍՌ-ի սահմաններում կոչվում է Հասան-Սու) և Տա-
վուշը: Երկուան էլ սկիզբ են առնում Մուրզուզի հյուսիսային լեռ-
նալանջերից, նրանց ջրերով աշխատում են մի քանի փոքր հիդրո-
էլեկտրակայաններ և ոսոգվում են Շամշադինի շրջանի հողերը:

III. ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՍՔ ՈՒՆԵՑՈՂ ԶՐԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԸ

Հայկական ՍՍՌ-ի տերիտորիայում, ինչպես նաև մյուս լեռ-
նային երկրներում լայն կերպով տարածված են ժամանակավոր-
հոսք ունեցող հեղեղատային ջրերը (սելավները): Նրանք սովորա-
բար առաջանում են ուժեղ անձրևներից հետո և ճանապարհին աս-
տիճանաբար հորդանալով, ընդարձակում են իրենց հունը, քանդում
անցուղիները, կամ հարթ տարածության վրա փռվելով, երբեմն
ծածկում են ցանքատարածությունները տիղմով, ավերում ճանա-
պարհները, ծաղկուն այգիները:

Հեղեղները սովորաբար առաջանում են տեղատարափ անձրև-
ներից, երբ ջրի մեծագույն մասը տվյալ վայրերում անմիջապես-
շի ներծծվում գետնի մեջ, այլ թեք ոելեֆով հոսում է գեղի մոտա-
կա գետակները:

Բնորոշ է Գետափի արտասովոր վարարումը, որը տեղի ունե-
ցավ 1946 թվականի մայիսի 25-ին, երբ տեղատարափ անձրևներից-
հետո գետը բարձրացավ, քանդեց իր առափնյա պատնեշները և
երևանի մոտ թեքելով իր ուղին, լցվեց քաղաքի՝ իրեն մերձակա-
փողոցները և զգալի ավերածություններ կատարեց:

Նույնանման վարարումով հայտնի է Ողջաբերդի լեռնաբազու-
կից սկզբնավորվող և գեղի Ազատ գետը հոսող ջոր սելավը՝ Նրա-
հսկայական ուժի մասին պատկերացում ունենալու համար նկա-
տենք, որ 1946 թվականի մայիսի 25-ին ուժեղ անձրևներից հետո-
նա շուրջ տվյալ դաշտում կանգնած տրակտորը և իր ոլորտի մեջ-
առած տարավ բավականին հեռու:

Նույն բնույթով հայտնի է նաև Չաթմա գետը: Նա սկիզբ է
առնում Գեղամա լեռների արևմտյան լանջերից և Արարատյան-
դաշտի սահմաններում ամբողջովին ցամաքում:

Ամռան ամիսներին երևում է Չաթմա գետի միայն չորացած-

հունը, սակայն ուժեղ անձրևների ժամանակ նա լցվում է կատաղի արագությամբ վար սլացող հեղեղացին ջրերով, որոնք հաճախ դուրս են գալիս իրենց ափերից և մեծ սպառնալիքի տակ առնում մերձակա հարթավայրի մշակելի տարածությունները:

Ժամանակավոր հոսք ունեցող գետերից է նաև Մաստարա հեղեղատը: Նա սկիզբ է առնում Արագածի արևմտյան լանջերից և գրավում մոտ 1200 քառ. կմ տարածությամբ ավագան: Զնայած ավագանի մեծությանը, Մաստարա գետի գլխավոր հոսնը տարվա մեծ մասում չոր է լինում, այդտեղով հոսում են միայն անձրևագրերը:

Մաստարա հեղեղատը խիստ վարարում է գարնանային անձրևներից և ձնհալքից: Մաստարան մասնակի վարարում է նաև աշնանը: Տարվա այդ եղանակներին Մաստարայի վարարումները հաճախ խոշոր ավերածություններ են կատարում:

Ուժեղ հեղեղատացին ջրերով հայտնի են նույնպես Մեղրի և Շվանիձոր գետերը:

Ներքեսում համեմատության համար տրվում են ՀՍՍԻ գլխավոր գետերի երկարություններն ու ջրահավաք ավագանների մեծությունները:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԸՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԳԵՏԵՐԻ ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Արաքս	933 կմ	10. Չորագետ	71 կմ
2. Ախուրյան	190 »	11. Արգիճի	69 »
3. Որոտան	189 »	12. Վեդի	58 »
4. Դեբեդ	178 »	13. Աղատ	56 »
5. Հրազդան	146 »	14. Մասրիկ	40 »
6. Աղստե	133 »	15. Գավառագետ	40 »
7. Արփա	126 »	16. Մեղրի	32 »
8. Քասախ	89 »	17. Վարդենիս	27 »
9. Ոխջի	85 »	18. Ջկնագետ	21 »

**ՀՅԱՅԱԿԱՆ ՍՍՈՒ-Ի ԿԱՐԵՎԱՐՅԱՐԱԳՈՒՅՆ ԳԵՏԵՐԻ
ԶՐՀԱՎԱՐԻ ԱՎԱՐԱՐՈՒՄՆԵՐԸ**

(Հայկական ՍՍՈՒ-ի սահմաններում)

I. Սևանի ավազանը ըստ առանձին գետերի

1) Մասրիկ	•	•	•	792	քառ.	կիլոմետր
2) Գալառագետ	•	•	•	422	»	»
3) Արգիծի	•	•	•	387	»	»
4) Վարդենիս	•	•	•	115	»	»
5) Զինագետ	•	•	•	21	»	»
6) Մնացած գետերը Սևանա լիճ				3154	»	»
Ավազանի հետ միասին						
Ավազանի ամբողջ ավազանը՝				4891	քառ.	կմ.


II. Արաքսի ավազանն ըստ առանձին գետերի

1) Ախուրյան	•	•	•	4076	քառ.	կիլոմետր
2) Որստան	•	•	•	2505	»	»
3) Հրազդան	•	•	•	2406	»	»
4) Արփա	•	•	•	2105	»	»
5) Քասախ	•	•	•	1716	»	»
6) Ոխջի	•	•	•	1018	»	»
7) Ազատ	•	•	•	548	»	»
8) Վեդրի	•	•	•	753	»	»
9) Մեղրի	•	•	•	339	»	»
10) Մնացած գետերը	•	•	•	2343	»	»
Արաքսի ամբողջ ավազանը՝				17809	»	»

III. Քուտի ավազանն ըստ առանձին գետերի

1) Թերեկ	•	•	•	3750	»	»
2) Ազստէ	•	•	•	2235	»	»
3) Մնացած գետերը	•	•	•	983	»	»

Քուտի ամբողջ ավազանը՝ 6968 » »



Նկար 5. ՀՅԴԻ գետային շտհել

IV. ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Հայկական ՍՍՌ-ում ամենուրեք հանդիպում ենք սառնորակ ու վճիռ աղբյուրների: Նրանց առաջացմանը մեծապես նպաստում են բեկորային տիպի անդեղիտա-բազալտային ապառները և խիստ ժակոտկեն տուֆերը:

Փիրուն քարատեսակները և բեկորային ու ժակոտկեն զանգվածները իրենց անցքերով հեշտ կերպով ներս են առնում ձյան և անձրկի ջրերը, որոնք աստիճանաբար ներծծվում են գետնի խորքը, կազմում ստորերկրյա առուներ և ապա լեռնալանջերի ցածրադիր մասերից, գետերի հովիտներում և կիրճերում դուրս գալիս երկրի մակերես որպես աղբյուրներ: Ներկայումս Հայկական ՍՍՌ-ում հաշվվում են 7500 անուշահամ և 1000-ից ավելի հանքային ստորերկրյա ջրերի ելքեր: Դրանց թվին պետք է ավելացնել նաև 600 արտեզյան աղբյուրները: Այդ բոլորը միասին վերցրած մեր երկրի յուրաքանչյուր քառ. կիլոմետր տարածությանը միշտն հաշվով մեկ վայրկյանում տալիս են 3,5 լիտր ջուր:

Ընդհանուր առմամբ Հայկական ՍՍՌ-ի աղբյուրներն աշքի են ընկնում իրենց ջրառատությամբ: Նրանք մեծ մասամբ երկրի մակերևույթ են դուրս գալիս մեծ հոսքով և գրեթե տարվա բոլոր ժամանակներում անփոփոխ պահպանում ջրի միկնույն քանակությունը: Առավել խոշոր աղբյուրները համարյա բոլորն էլ ավելի կամ պակաս շափով թափվում են գետերի մեջ: Ըստ որում մեր մի շարք գետերի հոսքը գրեթե ամբողջովին պայմանավորված է աղբյուրներից սննմամբ: Այդպիսիներից է, օրինակ, Որոտան գետի աջափնյա վտակ Շաքին, Արաքսի սիստեմին պատկանող Սևջուրը (իր սկզբնական շորս կիլոմետր տարածությունում), Գավառագետի, Մասրիկի, Արփի լճի մի շարք վտակները և այլն:

Հայաստանում սառնորակ աղբյուրներով հոշակված են Արագածը, Գեղամա լեռները, Վարդենիսի լեռնաշղթան, Զանգեզուրը և

Մի շարք այլ վայրեր: Գեղամա լեռների հյուսիս արևմտյան լանջերի ցածրադիր մասերում (Հաղիսի ստորոտներում) հոչակված է Քառասուն ակը կոչվող աղբյուրների խումբը, որից կազմվում է համարյա մի ամբողջական փու, որը լայնորեն օգտագործվում է թե՛ խմելու և թե Կոտայքի շրջանի ցանքատարածությունները ուսուգելու համար: Պաղ զովացուցիչ այդ աղբյուրներից է հիմնականում իր խմելու ջուրն ստանում երևանը:

Սառնորակ ջրերով հոչակված է նաև Ղուկասյանի սարահարթը: Այստեղ բազմաթիվ տեղերից երկրի մակերևույթ են դուրս գալիս հարյուրավոր հորդաբուխ աղբյուրներ: Այդ ջրերից, չնայած մեծ հեռավորությանը, օգտվում է լենինական քաղաքը:

Գեղամա լեռների վրայի առատ տեղումներով պայմանավորված սառնորակ հիանալի ջրերով աշքի է ընկնում Կամոյի շրջանի Հացառատ գյուղի շրջակայքը: Այստեղի հորդաբուխ աղբյուրներից սկիզբ է առնում Գավառագետի ձախակողմյան ամենամեծ վտակը:

Առատ աղբյուրներ կան նաև Ազատ գետի հովտում: Այստեղ Գեղարդ վանքի և Գառնի գյուղի միջև երկրի երես են դուրս գալիս մեծ թվով աղբյուրներ, որոնք իրենց ջրերն ստանում են Գառնի գետի և նրա սիստեմին պատկանող վտակների ավազաններից:

Հայկական ՍՍԾ-ի մյուս վայրերում, ստորերկրյա ջրերի հզոր ելքերով աշքի է ընկնում Սևանա ավազանի հարավային մասը, այնուհետև Որոտանի, Հրազդանի, Քասախի և Ջորագետի ավազանները: Այս վայրերում լավաների տակից դուրս բխող հզոր աղբյուրները աշքի են ընկնում խմելու ջրի բարձր որակով: Նրանց ջուրը սովորաբար փափուկ է, բարեխառնությունը շատ ցածր և բակտերային վարակումներից միանգամայն զերծ:

ՀԱՅՔԱՅԻՆ ԶԲԵՐԸ

Հայաստանը հարուստ է հանքային ջրերով: Նրանց առաջացումը, շարժումն ու քիմիական առանձնահատկությունները սերտորեն կապված են երկրաբանական, ինչպես նաև ֆիզիկա-աշխարհագրական յուրահատուկ պայմանների հետ: Հայկական ՍՍԾ-ի հանքային աղբյուրների վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նրանց մեծ մասը առաջա-

ցել է նորագույն ժամանակներում: Բայց դա չի բացառում մի շարք աղբյուրների համեմատաբար հին գոյությունը:

Հայաստանում հանքային ջրերը մեծ մասամբ տեղաբաշխված են տեկտոնիկ ճեղքերի և նորագույն հրաբխային գործունեության շրջաններում և մակերևույթ են դուրս գալիս բավականին մեծ խորովագույններից: Աղբյուրների մի մասը երկրի ներքին ջերմության հետևանքով շատ տաք է, իսկ տաք ջուրը, ինչպես հայտնի է ավելի մեծ քանակությամբ աղեր է լուծում, քան սառը: Այդ պատճառով տաք աղբյուրներն ավելի հարուստ են հանքային նյութերով և ունեն առավել բուժիչ հատկություններ: Այն աղբյուրները, որոնք հարուստ են ածխաթթվային նյութերով, ինչպես օրինակ, Արարատի աղբյուրները, իրենց ակունքային մասերում կուտակել են մեծ քանակությամբ տրավերտին (CaCO_3 ծակոտկեն կրային տուֆ), որի բաղադրի վրա մեզ մոտ զարգացել է Արարատի քիմիական և ցեմենտի արդյունաբերությունը:

Տրավերտինի այդ նույն նստվածքներում երբեմն հայտնաբերվում են կենդանական, բուսական, ինչպես նաև նյութական կուլտուրայի մնացորդներ, որոնք ցույց են տալիս, որ այդ վայրերի աղբյուրները գոյություն են ունեցել դեռ հնագույն դարաշրջանում: Այսպես օրինակ, Գորիսի շրջանի տրավերտիններում հայտնաբերված են մինչշորրորդական շրջանի վարազի ատամներ, Արարատյան խմբի աղբյուրների տրավերտիններում՝ մշտադալար բուսականության տերևներ, իսկ Արգնու աղբյուրների շրջանում նեղլիթյոն դարաշրջանի քարե դորձիքներ: Գորիսի և Արարատյան շրջանների տրավերտիններում հայտնաբերված մինչշորրորդական դարաշրջանին պատկանող բուսական և կենդանական մնացորդները ցույց են տալիս, որ այդ վայրերի աղբյուրները գոյություն են ունեցել այն ժամանակ, երբ դեռ մարդը գոյություն չուներ երկրի վրա:

Հայկական ՍՍՌ-ում գոյություն ունեցող տարրեր բաղադրությամբ և ջերմությամբ 1000-ից ավելի հանքային աղբյուրները կտպնում են մոտ 250 առանձնացված խմբեր: Դրանցից մինչեւ այժմ համեմատաբար ավելի հանդամանորեն ռւսումնասիրված են միայն 15 խմբերը:

Հայկական ՍՍՌ-ի հանքային աղբյուրներից առավել մեծ համբաւի են վայելում Արգնու և Զերմանկի ջրերը: Նրանք վաղուց այ-

դեն Հայտնի են մեր ոհսպութիկայի սահմաններից դուրս և լայն տարածում՝ են գտել մեր Միության բոլոր վայրերում և նույնիսկ արտասահմանում:

ԱՐՁՆՈՒ ԱՂՅՅՈՒԹՆԵՐԸ

Հայկական ՍՍԻ-ում ստորերկրյա ջրերի համեմատարար լայլ ուսումնասիրությամբ, ինչպես նաև լայն օգտագործմամբ ամենից ավելի հայտնի են Արզնիի հանքային աղբյուրները։ Նրանք գտնվում են Հրազդան գետի բավականին խորը և ոչ լայն կիրճում և երկրի մակերես են դուրս գալիս բազալտային ծածկոցից ներքեւ տարածվող սուֆային շերտերի տակից։

Արզնու աղբյուրները ուժեղ շիթերով դուրս են հորդում մի քանի տեղերով և հավաքվում արհեստականորեն կառուցված ավազանում։ Զրերի ջերմությունը 18—20 աստիճան է։ Դուրս եկող ջրերի մի մասը ներծծվում է կրաքարային շերտերի մեջ և որոշ տարածություն անցնելուց հետո կրկին երկրի մակերես է դուրս գալիս ավելի ցածր ջերմաստիճանով (մինչև 12 աստիճան)։ Իր որակով Արզնին հիշեցնում է Կիսլովուսկու նարզան և Էսենտուկիի № 17 ջրերը։ Արզնու ջրերը օգտագործվում են թե բուժիչ վաննաներ ընդունելու և թե խմելու համար։

Կատարված ուսումնասիրությունները պարզել են, որ Արզնիի աղբյուրներում ածխաթթվի հագեցվածությունը Սովհետական Միության մեջ եղած նույնանման աղբյուրների համեմատությամբ ամենաբարձրն է (մեկ լիտրում՝ 2,5 գրամ)։ Արզնիի տարբեր աղբյուրներում նկատվում է հանքային բաղադրության տարբերություններ և դա հնարավորություն է տալիս Արզնու աղբյուրներից, ածխաթթվի միատեսակ քանակի պայմաններում, բուժման վաննաները բաց թողնել ցանկացած շափի (ուժեղ, միջին և թույլ) քիմիական բաղադրություն ունեցող ջուրը։

Արզնու հանքային աղբյուրները գտնվում են Երևանից ընդամենը 20 կիլոմետր հեռավորության վրա։ Հանքային այդ ջրերի բազայի վրա Հրազդանի գեղատեսիլ կիրճում, ծովի մակերևույթից 1250 մետր բարձրության վրա ստեղծված է Արզնու առողջարանը։ Արզնու առողջարանի բնակլիմայական պայմանները, առանձնապես աշնան երկարաժամկետ արևաշատ շերմ օրերը, կանյոնակերպ խոր

կիրճը, արագահոս գետը, գեղատեսիլ պուրակները, արհեստականորեն նորերս ստեղծված ընդարձակ անտառային տարածությունների հետ միասին՝ առողջարանի ապագա զարգացմանը նպաստող մեծ նախադրյալներն են:

Ներկայում նախատեսված է առողջարանն ընդարձակել՝ նրան կից սարահարթի վրա կատարելով նոր կառուցումներ: Սարահարթը ձորի հետ միանալու է ֆունիկուլյորով: Սարահարթի վրա, ինչպես նաև Երևան—Սևան երկաթուղու ճանապարհին կառուցվելու են բազմաթիվ ամառանոցային շենքեր:

ԶԵՐՄՈՒԿԻ ԶՐԵԲԸ

Զերմուկը գտնվում է ծովի մակերեսութից 2000 մետր բարձրության վրա Արփա գետի գեղատեսիլ հովտում, Երևանից մոտավորապես 200 կիլոմետր հեռավորության վրա: Ալպյան փարթամ արոտավայրերն ու կուսական անտառները, բարձրաբերձ ծաղկագարգ լեռներն ու անդնդախոր ձորերը, գահավիճող գետակներն ու գեղատեսիլ ջրվեժները, լեռնային ռելիֆը, մաքուր օդը, անտառապատ սարալանջերը, վճիռ աղբյուրները արտասովոր կերպով գրավիչ են դարձնում Զերմուկի տերիտորիան: Բնության գեղեցկություններից մեկն է նաև մերձակա աղբյուրներից գոյացող Զերմուկի ջրվեժը, որը մոտ 60 մետր բարձրությունից գահավիժում է դեպի անդնդախոր ձորը:

Իրականում Զերմուկի աղբյուրների ամբողջ տերիտորիան ներկայացնում է իրար հերթափոխող, մեկը մյուսից գրավիչ տեսարժան վայրերի մի յուրօրինակ աշխարհ: Բնությունն այստեղ ամենուրեք երևում է իր հմայիչ գեղեցկությամբ: Այդ առավելապես ցայտուն կերպով դրսեռում է ամռան ամիսներին, եթե արևի կենսալից շղթերի տակ ամեն ինչ ժպտում է և աղբյուրներից հոսող ջրերի մեղմ կարկաչը հնչում ինչպես մանկան անուշ ծիծաղ:

Զերմուկի հանքային աղբյուրներն իրենց բուժիչ հատկություններով Հայաստանի բնակչությանը հայտնի են եղել դեռ շատ դարեր առաջ:

Զերմուկի լեռնային բացառիկ առողջարար կլիման, բուժման համար մեծ կարևորություն ներկայացնող ուլտրամանիշակագույն ճառագայթների առատությունը, արևային երկար օրերը, մեղմ

պետքուոք լավագույն նախադրյալներ են հանդիսացել այսուեղ, հանքային տաք աղբյուրների բազայի վրա ստեղծվելու Հայաստանում ամենից արժեքավոր ջերմուկի առողջարանը, որ այժմ Հայաստանի մայրաքաղաք Երևանի հետ կապված է նոր գեղեցիկ ավտոճանապարհով:

Ջերմուկում կան 36 բնական հանքային աղբյուրներ, բացի այդ, հորատանցքերի միջոցով բաց են արվել բազմաթիվ նոր շատրվաններ, որոնք ապահովում են առողջարանի համար ջրի անսպառ մուտքը:

Ջերմուկի գլխավոր աղբյուրներն ունեն 61—64 աստիճան չերմություն: Սակայն հենց այդ նույն տաք աղբյուրների կողքին, մի քանի քայլի վրա կարելի է հանդիպել նաև սառնորակ այնպիսի աղբյուրների, որոնց ջրի բարեխառնությունը 2—3 աստիճանից բարձր չէ: Այս իմաստով Ջերմուկի աղբյուրները իրոք իրենցից ներկայացնում են բնության ինքնատիպ հակադրությունների մի խսկական միասնություն:

Ընորհիվ Ջերմուկի ջրերի հիանալի բուժիչ հատկության, ամեն տաքի Սովորական Միության բոլոր ծայրերից, անգամ արտասահմանից այստեղ են գալիս ներկային, հողային, ստամփսային, լսարդի, շաքարախտի և մի շարք այլ հիվանդություններով տառապող հարյուրավոր մարդիկ: Ջերմուկի ջրերն առանձնապես դրական մեծ ազդեցություն են թողնում մանկական հիվանդությունների, անդամալույծների, հողացավեր ունեցողների բուժման վրա:

Իր ջրերի բուժիչ հատկությամբ Ջերմուկը նման է Զեխոսլովակիայի աշխարհահողակ Կարլովի-Վար առողջարանին, եղել են նույնիսկ գեպքեր, երբ հիվանդը Կարլովի-Վարում շրուժվելով ապաքինվել է Ջերմուկում:

ՀԱՆՔԱՅԻՆ ՄՅՈՒՄ ԱՂՅՅՈՒՐՆԵՐԸ

Հայաստանում հանքային մյուս ջրերից կարենոր բուժիչ նշանակություն ունեն Գորիսի շրջանի Տաթևի աղբյուրները:

Զնայած հեռավորության և անհարմար ճանապարհին, այժմ էլ ամեն տաքի, ամուսն ամիսներին, Գորիսից և շրջակա գյուղերից շատ հիվանդներ են գնում այնտեղ, բուժման նպատակով կառուց-

ված հասարակ ջրավագաններում լողանալու համար։ Նախնական ուսումնասիրությունների համաձայն, Տաթևի հանքային ջրերն ամենից ավելի պիտանի են համարվում ուսմատիզմի և մաշկային հիվանդությունների բուժման համար։ Այդ ջրերի բուժիչ հատկությունը հայտնի է եղել դեռ հին ժամանակներում։ Դրա ապացուցներն են հանդիսանում անցյալում գործող բաղնիքների և լողարանների հետքերը, ինչպես նաև տարեգրությունների մեջ արված հիշտափությունները։

Ներկայումս առանձին հետազոտողներ, հաշվի առնելով Գորիսի շրջանի բնական պայմանների ամբողջ կոմպլեքսը (պաղ, վճիռ ջրերը, առողջարար զով կլիման և այլն), ճիշտ են համարում Տաթևի հանքային ջրերի բազայի վրա, Որոտանի գեղատեսիլ կիրճում ստեղծել մի նոր առողջարան, որը շատ մոտ է Պափանի և Քաջարանի արդյունաբերական կենտրոններին։

Հանքային աղբյուրների շրջանում տուրիստական այցելությունների համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում երկրաշարժից կործանված, 9-րդ դարի հայկական ճարտարապետության հիմնալի կոթողներից մեկը՝ Տաթևի վանքը։ Նրան մոտիկ գտնվում են Հալիծորի բերդի ավերակները և բազմաթիվ ուրիշ հին հուշարձաններ։

Առողջարար հանքային ջրերով հայտնի են նույնպես Դիլիջանի շրջանում Բլգան գետակի հովտի աղբյուրները, որոնց շրերը արտահանվում են ՍՍՌՄ-ի զանազան քաղաքներ, որպես խմելու բուժիչ ջուր։ Բացի այդ, բոլորովին վերջերս, Մաղկունաց լեռների շրջանում, Մարմարիկ գետի հովտում հայտնաբերվեցին հանքային նոր աղբյուրներ, որոնք իրենց բուժիչ նշանակությամբ մոտ են էսենտուկիի շրերին։ Այդ ջրերի օգտագործման բազայի վրա, Մարմարիկ գետի հովտում ստեղծված է Հանքավան առողջարանը։

Եահագործման են հանձնված նաև Գավառագետի (Կամո քաղաքի շրջանում) հանքային աղբյուրները, որոնք աշքի են ընկնում իրենց ջրերի հաճելի համով։

Սևանա լճի ավագանում մեծ հետաքրքրություն են ներկայացնում Կամո քաղաքից ընդամենը 20 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Դրոհծորի հանքային աղբյուրներ։ Նրանցից մի քանիսն իրենց ջրերի քիմիական կազմով և հաճելի համով հիշեցնում են Զերմուկի և Չեխովլովակիայի Կարլովի-Վարի աղբյուրներին, թեև

նրանցից տարբերվում են ջրի ցածր (14 աստիճան) բարեխառնությամբ: Սակայն, ինչպես մեր մասնագետներն են ենթադրում (Ա. Տ. Ասլանյան), եթե այստեղ հորատումներ կատարվեն, ապա անկասկած կհայտնաբերվեն նաև տաք ջրեր, որովհետև այդ աղբյուրները չնայած գտնվում են շատ մեծ բարձրության վրա (2700 մետր), ուր օդը խիստ ցածր բարեխառնություն ունի, այնուամենայնիվ ունեն մինչև 14 աստիճան ջերմություն: Գրոհձորի աղբյուրների դրական հատկանիշներից է նաև ջրերի ուժեղ հանքայնացումը, ինչպես և համեմատաբար մեծ դեբիտը: Առանձին աղբյուրների ջրի հոսքը մեկ վայրկյանում կազմում է մեկ լիտր:

Հանքային ջրերի լավագույն հատկանիշներով հոշակված են նաև Արարատյան դաշտում Արարատի և Աղստեփ հովտում Ֆիոլետովի աղբյուրները: Այս վերջինները իրենց քիմիական և ջերմացին հատկանիշներով մոտիկ են մեծ համբավ ստացած Մղալտուրոցի ջրերին:

Մեծ քանակությամբ հանքային աղբյուրներ հայտնաբերված են նույնպես Արագածի լեռնազանգվածի, Շիրակի սարահարթի, Բագումի լեռների, Սևանա լճի, Որոտան, Աղստեփ, Աղատ, Հրադան, Արփա և մի շարք այլ գետերի ավազաններում: Շատ վայրերում հանդիպում են թթու ջրեր, որոնք տեղացիները բնական ձևով օդտագործում են ստամոքսաղիքային և երիկամների հիվանդությունների բուժման համար:

Այս ամենը ցույց են տալիս, որ Հայաստանի բնական հարստությունների թվում մեծ կարողություն են ներկայացնում ստորերկրյա ջրերը: Անկասկած է, որ Նրանք լաբորատոր մանրազնին ուսումնասիրությունների ենթարկվելուց հետո հնարավորություն կտան բուժիչ ջրերի նոր հատկությունների հիման վրա Հայաստանի շատ վայրերում ստեղծելու միայն տեղական, այլև միութենական նշանակություն ունեցող նոր առողջարաններ:

V. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-Ի ԼՃԵՐԸ

Հայկական ՍՍՌ-ում հանրահայտ է Սևանա լիճը: Սևանա լճից բացի, հաշվում են նաև մի քանի տասնյակ լճեր: Նրանք համարյա բռլորն էլ փողած են մեծ բարձրությունների վրա և իրենց յուրօրինակ գեղեցկությամբ առանձնահատուկ շուրջ են տալիս շրջապատի բարձրաբերձ լեռներին:

Բարձրադիր այդ լճերի մի մասը ձևավորվել է հրաբխային խառնարաններում և սնվում է ամռանը լեռների լանջերին բարակ շերտերով պահպանված ձյան հալոցքային ջրերից: Այս կարգի լճերից են Գեղամա լեռների, ինչպես նաև Ղարաբաղի սարահարթի լճերից մի քանիսը, որոնք ծովի մակերևույթի նկատմամբ հաճախ հասնում են մինչև 3000 մետր և ավելի բարձրության:

Լճերի մի այլ խումբ ձևավորվել է լեռնային գոգավորություններում հրաբխային ժայթքած նյութերի, ինչպես նաև առանձին դեպքերում լեռնային փլվածքների և սառցադաշտային նյութերի կուտակման շնորհիվ առաջացած արգելակման հետևանքով: Այս ձևով առաջացել են մի ամբողջ շարք ամբարտակային լճեր, որոնք առավել մեծ չափով տարածված են Հայկական լեռնաշխարհի հրաբխային շրջաններում:

1) ՍԵՎԱՆԱ ԼԻՃԸ

Սևանը բնության հազվագյուտ հրաշալիքներից է և Սովետական Հայաստանի ամենատեսարժան վայրերից մեկը: Այս ինչպես է բնութագրում Սևանա լիճը գրող Վահատանգ Անանյանը.

«Ձինջ է Սևանը անամպ օրերին: Նայողին այնպես է թվում, թե երկնի լազուրից մի կտոր է պոկվել ընկել այդ լեռների գոգը՝ նրանց խիստ դեմքը մեղմացնելու համար:»

Իսկ նրան շրջապատող լեռները կարծես հեքիաթային հսկա-

Ներ լինեն, որ ուս-ուսի տված շուրջպար են բռնել ու հենց պարի ժամանակ էլ քարացել են»

Մի տեղ այդ հսկաներից երկուսը կարծես ուշացել են ուս-ուսի տալ և այդպիս էլ քարացել են, իրենց միջև թողնելով մի բացվածք: Այդ բացվածքով էլ դարեր շարունակ հոսում է Զանգուգետը:

Սևանա լիճը հայտնի է հայ պատմության հնագույն ժամանակներից: Առաջնարում այն կոչվել է «Գեղամա ծով»: Աղբքեջանցիները Սևանին, երկնագույն ջրերի պատճառով անվանել են «Գյոկ-շայ», որ նշանակում է կապույտ ջուր:

Սևանը Սովետական Հայաստանի ամենամեծ ջրավազանն է:

Սևանա լիճն ունի զարմանալի պարզությամբ անուշահամ ջուր: Մեծ թափանցիկության պատճառով ջրի մեջ սուզվող իրերը տեսողությունից անհետանում են միայն 10—12 մետր խորության սահմաններում:

Զնայած լճի պարզությանը, նրա ջրերն իրենց մեջ պարունակում են որոշ քանակությամբ կրային նյութեր, որոնք եղածարդի նման սպիտակ շղարշով ծածկում են ժայռոտ ափերը:

Այդ նույն կրային նյութերը մեկ ընդհանուր զանգվածի մեջ իրար են միացրել հատակային մասի գլաքարերն ու ավազները և խցանելով ճեղքերը, լճի հատակը դարձրել են անշրանցիկ:

Սևանա լիճը սովորաբար չի սացապատվում, բայց պատահում են ուժեղ սառնամանիքային տարիներ, երբ ափամերձ մասերը (մեկ-երկու կիլոմետր լայնությամբ), իսկ երբեմն լճի ամբողջ մակերեսը ծածկվում է սառուցնելով: Այդ ժամանակ հնարավոր է լինում ոտքով մի ափից անցնել մյուսը:

Սևանը ընդհանրապես հայտնի է որպես հանգիստ, ոչ խոռվաճույզ լիճ: Սակայն տարվա որոշ ժամանակ, հատկապես ամռան երկրորդ կեսի հետաշշա ժամերին, շրջապատի լեռներից փլող քամիները առաջ են բերում ուժեղ ալեկոծություն, որն առանձին դեպքերում անհնար է դարձնում նորմալ նավագնացությունը: Առանձնապես սպառնալից բնույթ է կրում ալեկոծությունը, երբ այն տեղի է ունենում հարավից փլող «Մաղրա» կոչվող քամու ներդործության տակ:


Այդ ժամանակ, բաց ծովերում տեղի ունեցող ահեղ մրրիկների նման, Սևանա լճում նույնպես մոլեգնում է տարերքը, բարձրա-

նում են Հսկայական ալիքներ, որոնք զարնվում են ափամերձ ժայռերին, փշրվելով նահանջում հետ և ապա նոր ուժով հարձակվում, կրկնելով իրենց հարվածները մինչև ուշ գիշեր, իսկ առավայան վաղորդյան մշտշի միջից արդեն լիճը ժպտում է ամբողջովին հաշտ ու խաղաղ:

Սևանա լիճն աչքի է ընկնում մի քանի տեսակի ընտիր ձկներով: Նրանից ամենաբարձրորակը համարվում է «Իշխանը», որը բացի Սևանից, ուրիշ ոչ մի լճում չենք հանդիպում:

Բացի «Իշխանից» Սևանա լճում կան նաև կարմրախայտ, բախտակ, կողակ և այլ ձկներ:

Գեղեցիկ է Սևանա լիճը բարձրանիստ լեռների գրկում, բայց ավելի գեղեցիկ կլինի լիճը մոտ ապագայում: Կանցնեն որոշ տարիներ և Սևանա լիճը կշրջապատվի կանաչագեղ անտառներով, հանգստյան գեղեցիկ տներով, հոյակապ առողջարաններով: Լճի վրա փոքրիկ մարդատար և ապրանքատար նավերից բացի կլողան նոր զբոսանավեր, սպորտային մակույկներ: Սևանն իր շրջակայ-



Նկար 6. Սևանա լիճը և թերակղղին:

քով կդառնա մեր աշխարհի ամենասիրված անկյունը: Դրա համար նա ունի բոլոր տվյալները՝ Սևանի ավաղանի բարձր դիրքը, արևաշատ պայծառ օրերը, առափնյա վայրերի բյուրավոր ծաղիկների

բուրմունքով հագեցած լեռնային զով օդը և հենց ինքը կապույտ գույնով երանգավորված փառահեղ լիճը:

Սևանա լիճը գտնվում է ծովի մակերևույթից 1916 մետր բարձրության վրա: Դեռ ոչ շատ առաջ, մինչև նրա մակարդակի արհեստական իջեցումը, լճի երկարությունը հաշվում էր 75 կիլոմետր, լայնությունը՝ մոտ 8—35 կիլոմետր, իսկ ամենամեծ խորությունը՝ 99 մետր: Լճի ջրային հայելին զրավում էր 1416 քառ. կիլոմետր մակերես:

Սևանա լճի ամենանեղ մասը մի նեղուց է, որը գտնվում է Արտանիշ և Նորադուզ փոքրիկ թերակղզիների միջև: Այդ թերակղզիներն իրար միացնող գծով լիճը բաժանում են երկու անհավասար մասերի՝ Հյուսիս-արևմտյան, որին անվանում են Փոքր Սևան և Հարավ-արևելյան՝ Մեծ Սևան:

Փոքր Սևանը (մինչև լճի մակարդակի իջեցումը) ուներ 384 քամ ջրային մակերես և ամենամեծ խորությունը, իսկ Մեծ Սևանը՝ 1032 քառ. կիլոմետր ջրային մակերես և 50 մետրից ոչ ավելի խորություն:

Ամբողջությամբ վերցրած Սևանա լիճը մոտ երկու և կես անգամ ավելի մեծ է, քան Ալպյան լեռներում գտնվող աշխարհահոլակ ժննիքի լիճը, որի ջրային մակերեսը հավասար է ընդամենը 582 քառակուսի մետրի:

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ Ա.ՓԱՄԵՐՁ ՎԱՅՐԵՐԸ

Սևանա լիճը տարածվում է Հայկական լեռնաշխարհի հրաբրի ամառա մարզի տեղատոնիկ խոշոր իջվածքում: Լճի շրջապատում բարձրանում են Գեղամա, Վարդենիսի, Սևանի և Արեգումի լեռները, որոնք նախկինում ծածկված են եղել խիտ անտառներով: Այժմ անտառների փոքրիկ տեղամասեր (հիմնականում մացառուտների ձևով) հանդիպում են միայն Սևանա լճի արևելյան մասի լեռնալանջերին: Լիճը եղրավորող լեռների գգալի մասը զուրկ է բուսականությունից: Դրանք մեծ մասամբ ծածկված են գորշ, երբեմն բաց կապտավուն, սառնամանիքներից խիստ ճաքճքված լավային հսկայական քարակույտներով:

Գոգավորության ամենից լերկ տեղամասը Գեղամա լեռների հյուսիս-արևելյան լճամբերձ ափերն են (մոտավորապես Գավառա-

գետի գետաբերանից մինչև կճաշեն գյուղը): Այստեղ լավային հոսքերն առաջացրել են քարքարոտ, բեկորային տիպի մերկ ժայռեր, որոնք տեղ-տեղ խորանալով դեպի լիճը, ստեղծել են փոքրիկ հրվանդաններ և մի քանի խիստ քարքարոտ ծովախորշեր:

Փառահեղ է Սևանա լճի տեսարանը հյուսիս-արևելյան մասում: Այստեղ լեռները մերթ ահավոր բարձրությունից ուղղաձիգ պատերով իջնում են մինչև կապուտակ լճի խորունկ հատակը և մերթ հեռանալով լիից, ստեղծում են ավազով և գլաքարերով ծածկված ընդարձակ լողափեր:

Առավել ուշագրավ են լճի արևելքում Արեգունու լեռները, որոնք տեղ-տեղ լերկ քարափներով ուղղակի կախվում են լճի մակերևույթի վրա:

Մի փոքր այլ է գոգավորության պատկերը Սևանա լճի հարավային մասում, որտեղ եղրամասային լեռների և լճի միջև ընկած է մերձափնյա փոքրաթեր հարթությունը: Վերջինս ամբողջապես կազմված է գետային և լճային նստվածքներից: Այս մասում ընդհանուր առմամբ լճափը ցածրադիր է. տեղ-տեղ միայն լավային հոսքերից առաջացել են քարափներ, ժայռեր և քարաբեկորների կուտակումներ: Կան ճահճներ, որոնց մեջ իրենց բներն են դնում ճայերը, սագերը, բագերը և ջրասեր մյուս թռչունները: Ներկայումս լճի մակարդակի իջեցման հետևանքով ճահճներն զգալի չափով վերացել են և ճահճաբնակ թռչունների քանակը նվազել է:

Լճափնյա շատ վայրեր (հատկապես արևմտյան ափերում) աշքի են ընկնում լավաներից գոյացած քարաբեկորների բարձունքներով: Նրանց սահմաններում հաճախ հանդիպում են ավելոված պարիսպներ, բնակավայրերից մնացած քարակույտեր, ինչպես նաև այստեղ ապրած մի շարք ընտանի կենդանիների հետքեր: Ընդհանուր առմամբ լճի շուրջն ընկած գետահովիտներն ու ձորերը լի են հինավորց եկեղեցիներով, վանքերով, խաչքարերով ու դամբարաններով, որոնք ծածկված են արձանագրություններով: Այդ ամենը թույլ են տալիս որոշակի գաղափար կազմել անցյալում այստեղ ապրած բնակիչների կենցաղի, կուլտուրայի զարգացման աստիճանի մասին: Այսպես, օրինակ, Սևանա լճից հյուսիս, Շուլինար գյուղի մոտ մի ժայռի վրա արձանագրված է Սարդուրի որդի Ռուսայի օրոք ուրարտացիների նվաճողական արշավանքների մասին:

Սևանա լճի հյուսիս-արևմտյան ծայրամասում, ափից հազիվ մեկ կիլոմետր հեռավորության վրա գտնվում է Սևանա կղզին, որը այժմ լճի մակարդակի իջեցման հետևանքով դարձել է թերակղզի։ Սևանա նախկին կղզին ընդհանուր առմամբ ունի ապառաժոտ մակերևույթ և ուղղաձիգ անմատչելի պատեր, որոնք լճի երկնագույն ֆոնի վրա երևում են յուրօրինակ գեղեցիկ, հմայիլ առանձնահատկությամբ։

Հնում կղզին եղել է մենաստան և ուխտատեղի, իսկ պատերազմական գործողությունների ժամանակ որպես անառիկ ամրոց։ Սևանա կղզում գտնվում են երկու փոքրիկ վանքեր, պատմական հնություններ և մի շարք հին ու նոր հիշատակություններ, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում հատկապես պատմաբաններին։

Կղզին գրավում է 0,5 ք կմ տարածություն։ Ներկայումս այն հայտնի է իր հանգստարաններով։

ՍԵՎԱՆԱ. ԼՃԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ՍԻԵՄԱՆԵՐԸ.

Սևանա լիճը յուրաքանչյուր տարի գետերից և մինուլորաային տեղումների միջոցով ստանում է 1320 միլիոն խորանարդ մետր ջուր։ Ներծծման և Հրազդան գետի միջոցով Սևանը տարեկան կորցնում է 110 միլիոն խորանարդ մետր ջուր։ Մնացած 1210 միլիոն խորանարդ մետր ջուրը գոլորշիանում է։ Գոլորշիացումը կազմում է Սևանա լիճը թափվող ջրային ոհսուրսների ավելի քան 90 տոկոսը։ Հետևապես կարելի է ասել, որ լիճը թափվող ջրերի միայն 10 տոկոսն է օգտագործվում։

Նկատի ունենալով այդ, դեռ 1930 թվականին առաջադրվեց Սևանա լճի ջրերի դարավոր պաշարների օգտագործման հարցը։ Սևանի պրոբլեմը նախատեսում էր ջրի մակարդակի իջեցմամբ նվազեցնել գոլորշիացումը, կրճատել լճի մակերեսը մոտ 7 անգամ և ավելացնել Հրազդան գետի ջրի քանակը, օգտագործելով այն

1. Տգլալները գերցված են հետեւյալ գրքերից. Մ. Մ. Լեբեդե—Սևանի պլանը եմք, Երևան, 1946 թ. ՀՍՍՌ Գիտ. ակադեմիայի հրատ.։ Ալ. Հովսեփյան՝ «Հայկական ՍՍՌ էներգետիկ տնտեսության հիմնական հարցերը», Հայպետհատ, Երևան, 1959 թ.։

Հիմնականում էներգետիկ սխմեմի, այն է Սևան—Հրազդան լիանկաղի 6 հիդրոէկտրակայանների կառուցման և Արաքսի գոգավորության անջրդի տարածությունների ոռոգման համար:

Պրոբեմը նախատեսում էր մինչև 50 մետրով իջևնել լճի մակարդակը ընդհուպ մինչև Մեծ Սևանի ցամաքումը:

Սակայն նկատի ունենալով Սևանա լճի ջրերի օգտագործման նախնական սխեմայի մի շարք թերությունները, 1956 թվականին ՀԿՊ Կհնտկումը և ՀՍՍՌ Մինիստրների Սովետը որոշում ընդունեցին վերանայել Սևանա լճի ջրերի օգտագործման սխեման: 1961 թ. հաստատվեց Սևանա լճի ջրերի օգտագործման նոր սխեմա, որի համաձայն նախատեսվում է Սևանի ջրի մակարդակը թողնել մոտավորապես ժամանակակից բարձրությանը, կրճատելով ջրի մակերեսը ընդամենը 13 տոկոսով: Միաժամանակ վարդենիսի լեռնաշղթայի սահմաններում փորվելու է 58 կիլոմետր երկարությամբ թունել, որով ամեն տարի Սևանա լիճն է հոսելու Արփա գետի և Եղեգիսի վերին հոսանքներից բավարար քանակությամբ լուսցոցի ջուր:

Սևանա լճի ջրերի օգտագործման այս նոր պրոբեմի լուծումը հնարավոր է դառնում շնորհիվ Աղքահանական ՍՍՌ-ի Ղարաղաղ հանգավայրից ստացվող բնական գագի, որը թույլ է տալիս Հայաստանում կառուցել մի քանի խոշոր ջերմաէլեկտրակայաններ: Հասկանալի է, որ հենց այդ կապակցությամբ վերանում է Սևանից մեծ քանակությամբ ջուր բաց թողնելու անհրաժեշտությունը:

Ինչ վերաբերում է ոռոգումներին, ապա այդ նպատակով նախատեսվում է օգտագործել ստորերկրյա ջրերը, արտեզյան ջրհորները, ինչպես նաև ստեղծել մի շարք խոշոր ջրավազաններ, որոնք կառուցվելու են Հրազդան և Քասախ գետերի միջին հոսանքներում:

Սևանա լճի ջրային ռեսուրսների օգտագործման նոր սխեման նախատեսված է լիովին իրականացնել մինչև 1969 թվականը:

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՇԱԳՈՒՄԸ

Սևանա լճի ավագանը Սովետական Հայաստանի ամենալավ ուսումնասիրված վայրերից մեկն է: Զնայած այդ հանգամանքին, Սևանա լճի առաջացման հարցի վերաբերյալ մինչև այժմ գեռն չկա բոլորի կողմից ընդունելի մեկ միասնական տեսակետ:

Լճի նախնական հետազոտողներից աշխարհագրեատ Ե. Մար-

կովը, իսկ այնուհետև պրոֆեսոր Ա. Ֆ. Լյաստերը նրա ծագումը բացատրել են գետահովտի արգելափակումով։ Ներկայումս այդ տեսակետը (առավել հիմնավոր փաստերով) իր մի շարք աշխատություններում պաշտպանում է ակադեմիկոս Կ. Ն. Պաֆենգոլցը։

Նրանց բացատրությունների համաձայն, Սևանա լճի առաջացման պատճառը հրաբխային նյութերն են (լավաները), որոնք արգելափակել են լճի տեղում նախկինում գոյություն ունեցող գետահովտը։ Հետևապես ըստ այդ հեղինակների, Սևանա լիճը կարելի է ասել ունի ամբարտակային ծագում։

Սևանա լճի գոգավորության առաջացման հարցի վերաբերյալ Կ. Ն. Պաֆենգոլցին համամիտ է նույնպես երկրաբանական գիտությունների դոկտոր Ա. Տ. Ասլանյանը, այն տարրերությամբ միայն, որ վերջինս ենթադրում է, թե ժամանակակից լճի տեղում գոյություն է ունեցել համեմատաբար ավելի հին և խոշոր մի լճային ավազան (Պալեոսևան), որից մնացել է ներկայիս Մեծ Սևանը։ Հետևապես Սևանա լիճն ըստ Ասլանյանի ունի ուելիկտային (մնացուկային) ծագում։

Սակայն 1927—30 թվականներին Սևանի ավազանում աշխատող ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի երկրաբանական էքսպեդիցիան, որին ղեկավարում էր Ֆ. Լինսոն-Լիսինզը, տվել է մի շարք այլ փաստեր (ապացույցներ), որոնք ցույց են տալիս լճի տեկտոնիկ (խզումնային) ծագումը։ Այսինքն այն, որ լիճը գոյացել է երկրի ներքին ուժերի գործունեության հետ կապված երկրակեղեկի տեղաշարժումների հետևանքով։ Այդ նույն կարծիքը նոր տվյալներով ներկայումս պաշտպանում է նաև Հայկ։ ՍՍՌՄ Գիտության ակադեմիայի թղթակից անդամ պրոֆեսոր Ա. Հ. Գաբրիելյանը։

Այլ պատկերացում ունի Սևանա լճի առաջացման մասին անվանի երկրաբան պրոֆեսոր Լ. Ա. Վարդանյանը։ Նա այն միտքն է հայտնում, որ լճի առաջացման պատճառը եղել են նորագույն ժամանակաշրջանի փոքրաթեք ծալքավոր շարժումները։

Հնարավոր է, որ բոլոր բացատրություններն էլ այս կամ այն շափով ճիշտ են, մնում է անառարկելի այն, որ լճի ծագումը բոլոր դեպքերում սերտորեն կապված է եղել երկրի ներքին ուժերի գործունեության հետ։

Սևանա լիճը հայտնի է իր մակարդակի պարբերական տատանումներով։ Բնդ որում դիտումները ցույց են տվել, որ մի շարք տարիների ընթացքում լճի մակարդակը աստիճանաբար իջնում է և ապա հաջորդ տարիներին կրկին բարձրանում։ Այդ տատանումների պատճառով լճի առավինյա ժայռերը մերթ անցնում են ջրի տակ և մերթ բարձրանում մակերես։

Ներկայումս այդ առավել ցայտուն օրինակով հաստատվում է լճի մերկացված տեղամասերում հայտնաբերված ավերված բնակավայրերի հետքերի և դամբարանների հայտնաբերմամբ։ Նրանք ցույց են տալիս, որ այդ վայրերը մարդկային պատմության ոչ վաղ անցյալում եղել են ցամաք և հետո անցել են ջրի տակ լճի մակարդակի բարձրացման հետևանքով։

Այդ տատանումները որոշակիորեն ազգել են նաև Հրազդան գետի ոեժիմի վրա։ Եղել են տարիներ, երբ Սևանա լճի մակարդակը խիստ իջնելու հետևանքով Հրազդան գետի ջուրն այնքան է նվազել, որ բնակիչները չեն կարողացել աշխատեցնել գետի վրա կառուցված ջրաղացները (1875 թ.)։

Չնայած մինչ այժմ դեռևս չի հաստատվել Սևանա լճի մակերեսի տատանման տևողության ճշտությունը, բայց մի քանի գիտնականներ (Ա. Ֆ. Լյաստեր, Ստ. Լիսիցյան, Կ. Ն. Պաֆենգոլց) նշում են, որ այդ տատանումները համընկնում են Վանի, Ուրմիացի և Ասիայի նույնանման մի շարք այլ լճերի մակարդակի տատանումների հետ։ Ըստ երևույթին այդ տատանումները կապ ունեն ոչ միայն կլիմայական, այլև տեկտոնական (այդ մասի երկրակեղեի բարձրացման և ցածրացման) պատճառների հետ։

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԵՐԿԱՑՎԱԾ ՀԱՏԱԿԸ

Արտակարգ հետաքրքրություն է ներկայացնում ջրի մակարդակի իջեցման հետևանքով Սևանա լճի մերկացված հատակը։ Լճի ցամաքած հատակում կատարված հնէագիտական պեղումները հայտնաբերել են անցյալում այստեղ ապրած բնակիչների, նրանց կենցաղի, կուլտուրայի, զարգացման աստիճանի վերաբերյալ բացառիկ արժեք ներկայացնող բազմաթիվ հուշարձաններ։ Մեծ թվով

դամբարաններ, լայն և ուղիղ փողոցներ ունեցող բնակատեղի ավեարակներ և այլն:

Առանձնապես Լճաշեն գյուղի շրջակայքում հնէագետների կատարած ուսումնայիրություններից պարզվում է, որ տեղաբնակ ցեղերի մոտ այս երկրը կոչվել է Շանա:

Շանա երկրի տերերին պատկանող Լճաշենի դամբարանաբուրգերում գտնված բազմաթիվ թանկարժեք իրերի կողքին, առաջին անգամ հայտնաբերված են զանազան կավամաններ, որոնք ներկված են կարմիր և սպիտակ գույներով: Ապշեցուցիչն այն է, որ այդ ներկերը հազարավոր տարիներ հետո, մինչև մեր օրերը ոչ միայն չեն թափվել, այլև բոլորովին չեն կորցրել իրենց սկզբնական վառ գույնը:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Լճաշեն գյուղի շրջակայքում գտնված յուրօրինակ կառքերը, որոնք իրենց ինքնատիպությամբ ամբողջովին տարբերվում են մեր երկրում օգտագործվող ամեն տեսակի կառքերից:

Սևանա լճի ցամաքած տարածությունների վրա հնէագետ Հ. Մնացականյանի կողմից ղեկավարած արշավախմբի պեղումների տվյալներով հաստատվում է, որ Սևանա լիճը 2400—5000 տարի առաջ եղել է անհամեմատ ավելի ցածր մակարդակի վրա, քան այժմ: Այդ նշանակում է, որ Հրազդան գետը նշված ժամանակաշրջանում լճից սկիզբ առնել չեր կարող, որովհետև նրա ակունքները լճից բարձր են 13 մետրով: Հետևապես պիտի ենթադրել, որ Հրազդանը սկիզբ է առել ավելի ուշ շրջանում, երբ լիճը բարձրացել է մինչև արհեստական իջեցման մակարդակը և կամ թե լճի մակերեսի տատանումների պատճառով եղել է մի ժամանակաշրջան, երբ Հրազդանի հոսքը տեսական ժամանակով դադարել է, մինչև որ Սևանա լճի մակարդակը կրկին բարձրացել է մինչև ժամանակակից մակարդակը (1916 մետր):

2. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-Ի ՓՈՔՐ ԼՃԵՐԸ

Հայկական ՍՍՌ-ում մյուս բոլոր լճերը աշքի են ընկնում իրենց համեմատաբար փոքր չափերով, չնայած նրանցից շատերի ոռոգողական և մասամբ էներգետիկ մեծ նշանակությանը:

Փոքր լճերից առավել կարևորներն են Հլուսիսային Հայաստա-

նում՝ Արփի, Արարատյան դաշտում՝ Այղը (Մեծամոր), Գեղամա լեռներում՝ Ակնա և Արագածում՝ Քարի լճերը:

Արփի լինք գտնվում է Ղուկասյանի բարձրադիր սարահարթում, ծովի մակերևույթից 2020 մետր բարձրության վրա: Լիճը գրավում է մոտ 5 ք կմ՝ մակերես և 250 ք կմ՝ տարածությամբ ջրահավաք ավագան և սնվում է մի քանի մանր գետակների և աղբյուրների ջրերով:

Արփի լիճը ծանծաղ է: Նա ունի 2 մետրից ոչ ավելի միջին խորություն: Հատակը տղմոտ է, ափերը տեղադրությամբ ճահճապատ:

Ներկայումս նախատեսվում է շրջապատի գետակների և աղբյուրների հավաքած ջրերով մեծացնել լճի մակերեսը, դրանով իսկ Արփին վերածել մոտ 100 միլիոն խոր. մետր ջրածավալով ջրամբարի: Այս ձեռվ հնարավոր կլինի ոչ միայն նվազեցնել ճահճապատ տարածությունները, այլև լճում կուտակվող ջրերն օգտագործել ոռոգման և էներգետիկ նպատակների համար: Արփին ունի անուշահամ ջուր: Նրանում ապրում է ծածան ձուկ:

Այլր լինք Հայկական ՍՍՌ-ի լճերի մեջ միակն է, որ գտնըվում է ցածրադիր հարթությունում (Արարատյան դաշտում), ծովի մակերևույթից ընդամենը 826 մետր բարձրության վրա:

Լիճը գրավում է մոտ 0,4 քառակուսի կիլոմետր տարածություն և ունի ընդամենը մի քանի մետր խորություն: Այղը լիճը սնվում է Արագածի հարավային լանջերի ստորերկրյա ջրերով, որոնք հորդառատ աղբյուրների ձեռվ գուրս են գալիս երկրի մակերես լճի եզրերում և մասամբ հատակային մասում (ենթագրվում է, որ լիճը սնվում է նաև Արաքս և Քասախ գետերի գետնաջրերով):

Այղը լճի ջրերի մի մասը ջրհան մեքենաների միջոցով վեր են բարձրացնում և կառուցված 2 ջրանցքներով ոռոգում Արարատյան հարթավայրում մի քանի հազար հեկտար այգիներ ու դաշտեր:

Այղը լճի շուրջն ստեղծված է փոքրիկ անտառային պուրակ, որտեղ սովորաբար ամռան ամիսներին իրենց կիրակնօրյա հանգիստն են անցկացնում երևանից զբունելու մեկնած աշխատավորները:

Քարի լինք մեր լեռնաշխարհի գեղատեսիլ լճերից է Արագածի գագաթամերձ շրջանում, մոտ 3150 մետր բարձրության վրա: Փոքրիկ է այդ լիճը, բայց հրապուրիչ իր մենության մեջ: Լճին առանձին հրապուրը են տալիս նրա շրջապատի ալպյան մարգա-

գետինները, ամենուրեք տարածված բազմերանգ ծաղիկները, լեռնային մաքուր օդը և վեհապանծ Արագածի ձյունափայլ գագաթի մոտիկությունը: Լճի ջուրը պարզ է և կապուտակ. ափերը մեծ մասամբ քարքարոտ են: Լճի շրջագիծը կազմում է մոտ 3—4 կիլոմետր: Ըստ երևութին առաջներում լճից փորված է եղել առու, որով լճի ջրի մի մասը հոսել է Ամբերդ գետը, հետագայում այն մատնվել է անուշաղբության և ավերվել:

Ակնա լինը Գեղամա լեռների լճերից ամենամեծն է, գտնվում է Երևանից 25 կիլոմետր հեռու, զրբաժան շղթայի կենտրոնական մասում: Լիճը գրավում է մոտ 0,6 քկմ. տարածություն, խորոշյունը հասնում է մինչև 15 մետրի:

Պարզ լինը գտնվում է Դիլիջանից ոչ շատ հեռու, Աղստեկի հովտում և բնության հրաշալիքներից մեկն է: Բնությունը շուալել է նրան զարմանալի գեղեցկություն: Լիճը շրջապատված է խիտ անտառային բուսականությամբ: Ունի մաքուր, վճիռ ջուր: Նրանից սկիզբ են առնում փոքրիկ առվակներ, որոնցով լճի ջրերը հոսում են դեպի Աղստեկ գետը:

* * *

Հայկական ՍՍՌ-ի մյուս (հիմնականում անանուն) լճերը մեծ մասամբ գտնվում են լեռների բարձրադիր լանջերին: Նրանք առավելապես կարեոր նշանակություն ունեն արոտային անասնապահության և լեռնալանջերի պտղաբեր հողերի ոռոգման համար:

ԿԻՐԱԿՈՍ ՕՀԱՆԻ ՕՀԱՆՅԱՆ

Հայկական ՍՍՌ-ի գետերն ու լեռը

Խմբագիր՝ Ա. Հ. Պողյան
Տեխն. խմբագիր՝ Բ. Ե. Ախիրյան
Վերստուղող սրբազրիչ՝ Ա. Մաքենյան

ՎՃ 08301

Պատվեր 340

Տիրաժ 3000

Հանձնված է արտադրության 8/V 1961 թ.
Ստորագրված է տպագրության 30/IX 1961 թ.
Թուղթ 60×92 /₁₆, Տպագր. 4,25 մմ. հրատ. 3,6 մմ.
Գրնը 10 կրպ.

Հայպետուսման կհրատի տպարան, Երևան, Տեղյան փ. № 127

15525

ԳԻՒԾ 10 ԿՈՂ.1